

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ»,
«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», « ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ
ԶԲԱԴԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ», «ՕՊԵՐԱՏԻՎ - ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընթացիկ իրավիճակը, առկա խնդիրները, նախագծերի ընդունման անհրաժեշտությունը

Կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու գլխավոր գրավականներից է արդյունավետ ինստիտուցիոնալ համակարգի առկայությունը, բարեվարքության ամրապնդումը, կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովումը: Կոռուպցիայի կանխարգելման, պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով առանցքային նշանակություն ունի օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը, կոռուպցիայի դեմ պայքարի կրթական և կանխարգելիչ գործառույթների իրականացումը: Բացի այդ, ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործողությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջինիս

օժտել կոռուպցիայի դեմ պայքարի հաջողելու համար անհրաժեշտ գործիքակազմ: Մասնավորապես, որպես կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն գործիք և կառուցակարգ՝ անհրաժեշտ է զարգացնել ազդարարման համակարգ և ստեղծել համապատասխան գործուն կառուցակարգեր:

Ինչ վերաբերում է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգին, ՀՀ-ում ներկայումս կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ, կրթական և իրավապահ գործառույթների իրականացումը վերապահված է պետական իշխանության տարբեր մարմինների:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի իրավապահ գործառույթներն իրականացնում են քննչական և դատախազական մարմինները, իսկ կանխարգելման գործառույթի իրականացումը վերապահված է տարբեր մարմինների: Մասնավորապես, ՀՀ-ում կոռուպցիայի կանխարգելման գործառույթներ իրականացնում են ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի «Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ ստեղծելու, խորհրդի կազմը, խորհրդի, փորձագիտական հանձնախմբի և ՀՀ Կառավարության աշխատակազմի հակակոռուպցիոն ծրագրերի մոնիթորինգի բաժնի գործունեության կարգը հաստատելու մասին» N 165-Ն որոշման հիման վրա ստեղծված Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը, 2012 թվականի հունվարի 9-ի «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (այսուհետև՝ ԲՊԱ էթիկայի հանձնաժողով):

Օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ առկա են մի շարք խնդիրներ, որոնք գործնականում խոչընդոտում են կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու գործընթացին, այդ թվում՝ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետությանը:

Մասնավորապես,

Խնդիր 1.1 Սահմանափակ են ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործառույթները և լիազորությունները կոռուպցիայի կանխարգելման ոլորտում:

Գործող օրենսդրության շրջանակներում ՀՀ-ում կոռուպցիայի կանխարգելիչ մարմնի որոշակի գործառույթներ իրականացնում է ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը, սակայն վերլուծելով ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործառույթների շրջանակը՝ պարզ է

դառնում, որ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործառույթները սահմանափակ են, մասնավորապես՝ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը ներկայումս չի իրականացնում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում մի շարք կարևոր գործառույթներ, ինչպիսիք են՝

✓ *կրթական և հանրային իրազեկվածության բարձրացման գործառույթների իրականացումը.*

✓ *կոռուպցիային նպաստող պարճառների և պայմանների բացահայտմանն ու վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելը:*

Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական գործիքներից մեկը արդյունավետ հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացումն է, ինչը նպաստում է նշված ոլորտում հանրային իրազեկվածության բարձրացմանը: Հայաստանի Հանրապետության կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործառույթները հակակոռուպցիոն կրթության ոլորտում խիստ սահմանափակ են: ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման և կոռուպցիայի դեմ պայքարում հաջողելու նպատակով անհրաժեշտ է, որ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը ակտիվ դերակատարություն ստանձնի՝ հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակման, հանրային ծառայողների վերապատրաստման ծրագրերի մշակման հարցերում:

Կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից առանցքային կարևորություն ունի կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Այսպիսի պահանջ ամրագրված է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում՝ այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են՝

ա) սույն Կոնվենցիայի 5-րդ հոդվածում նշված քաղաքականության իրականացումը և, համապատասխան դեպքերում, այդպիսի քաղաքականություն իրականացման հսկողությունը և համակարգումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման հարցերով գիտելիքներն ընդլայնելը և տարածելը:

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ մի շարք պետություններում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական ուղղություններից մեկը հենց հակակոռուպցիոն կրթական գործառույթների իրականացումն է: Մասնավորապես, Լատվիայում գործող Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոյի գործունեության հիմնական ուղղություններից մեկը կրթական գործառույթների իրականացումն է: Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն իրականացնում է հակակոռուպցիոն կրթական գործառույթներ՝ հասարակության տարբեր հատվածների համար հակակոռուպցիոն կրթական միջոցառումների կազմակերպման միջոցով: Լիտվայում գործող հատուկ քննչական ծառայությունը, որը համարվում է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ունիվերսալ մասնագիտացած մարմին, նույնպես զբաղվում է հակակոռուպցիոն կրթությամբ, որի գործունեության հիմնական նպատակն է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հասարակության իրավագիտակցության բարձրացումը, հանրության շրջանում կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության ձևավորումը: Հարավային Կորեայում գործող հակակոռուպցիոն հանձնաժողովը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքացիների մասնակցությունը խթանելու նպատակով կազմակերպում է հանրային իրազեկման միջոցառումներ, որոնք դրսևորվում են տարաբնույթ քննարկումների, սեմինարների կազմակերպման և այլ ձևերով:

Խնդիր 1.2. Առկա են խնդիրներ՝ կապված ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի անկախության ապահովման երաշխիքների հետ: Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացած մարմինների գործունեության արդյունավետության ապահովման համար առանցքային նշանակություն ունի կոռուպցիայի կանխարգելման մարմնի անկախության ապահովումը: Այսպիսի պահանջ ամրագրված է ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 6-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան կոռուպցիայի դեմ պայքարի մարմնին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան

իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված (...):

Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացած մարմնի անկախությունը ենթադրում է ինստիտուցիոնալ և գործառութային անկախության ապահովում: Ինստիտուցիոնալ անկախությունը ենթադրում է, որ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը չպետք է գտնվի պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի կազմում կամ պետական իշխանության որևէ մարմնի ուղղակի կամ անուղղակի ազդեցության տակ: Գործառութային անկախությունը ենթադրում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մարմինը օրենսդրությամբ իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս պետական իշխանության մարմիններից անկախ է և պետական իշխանության մարմինները չպետք է միջամտեն կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մարմնի գործառույթների իրականացմանը:

ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի անկախության ամրապնդման և գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև *հանձնաժողովի անդամների անկախության բավարար երաշխիքների նախադրետումը*: Այս առումով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածը նախատեսել է ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի անդամի անկախության երաշխիքները, սակայն այդ երաշխիքների համակարգային վերլուծությունից բխում է, որ դրանք բավարար չեն հանձնաժողովի անդամների անկախության ապահովման տեսանկյունից: Ներկայումս ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի անդամները չունեն անձեռնմխելիության երաշխիքներ: Հակակոռուպցիոն մարմնի անդամների անձեռնմխելիության սահմանումը գործուն երաշխիք կարող է հանդիսանալ մարմնի պատշաճ գործունեության համար: Անդամների անձեռնմխելիության պահանջն արտացոլված է ինչպես միջազգային, այնպես էլ տարբեր երկրների ներպետական իրավական ակտերով: Մասնավորապես՝ «Հակակոռուպցիոն մարմինների վերաբերյալ սկզբունքների Զակարտայի հայտարարություն»-ը, ի թիվս այլ դրույթների, նախատեսում է նաև անձեռնմխելիության սկզբունքը: Վերոնշյալ հայտարարությամբ սահմանված է, որ հակակոռուպցիոն մարմնի անդամները իրենց պաշտոնական պարտականությունների շրջանակներում կատարված գործողությունների համար

պետք է օժտված լինեն անձեռնմխելիությամբ: ԵԱՀԿ-ն, ընդգծելով անձեռնմխելիության ինստիտուտի կարևորությունը, 2014թ. նոյեմբերի 17-ին կարծիք է հայտնել Լատվիայի իրավակարգավորումների վերաբերյալ, մասնավորապես նշելով, որ ցանկալի է օրենքի մակարդակով ընդլայնել անձեռնմխելիության դրույթները՝ ապահովելով, որ դրանք պաշտպանեն Բյուրոյի անդամներին (այդ թվում՝ ղեկավարին) ոչ միայն քրեական, այլև վարչական եւ քաղաքացիական պատասխանատվությունից՝ իրենց պաշտոնական պարտականությունների շրջանակներում կատարված գործողությունների համար:

Այս առումով մի շարք պետություններում գործող կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացած մարմինների անդամները նույնպես օժտված են անձեռնմխելիության երաշխիքներով: Մասնավորապես՝ «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի բյուրոյի մասին» Լատվիայի օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Բյուրոյի անդամն օժտված է անձեռնմխելիության երաշխիքներով. այդ երաշխիքները չեն կիրառվում Բյուրոյի անդամների նկատմամբ, եթե նրանք բռնվել են հանցագործություն կատարելիս, այդ մասին գլխավոր դատախազը և Բյուրոյի նախագահը պետք է տեղեկացվեն 24 ժամվա ընթացքում: Զամբիայի «Հակակոռուպցիոն հանձնաժողովի մասին» ակտի 15-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի անդամի նկատմամբ չի կարող հարուցվել քրեական կամ քաղաքացիական վարույթ այնպիսի գործողության համար, որը կատարել է սույն ակտով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում, Հանձնաժողովի անդամը չպետք է կանչվի ցուցմունք տալու դատարանի առաջ այնպիսի տեղեկությունների վերաբերյալ, որոնք նրան հայտնի են դարձել իր պաշտոնական լիազորությունների իրականացման առնչությամբ:

Խնդիր 1.3. ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը չունի բավարար ռեսուրսներ իր գործառույթների և լիազորությունների արդյունավետ իրականացման համար:

Հանձնաժողովի գործունեության հիմնական երաշխիքներից մեկը բավարար ռեսուրսների առկայությունն է: Այսպիսի պահանջ ամրագրված է մի շարք միջազգային իրավական ակտերով, մասնավորապես «Հակակոռուպցիոն մարմինների վերաբերյալ սկզբունքների Զակարտայի հայտարարություն»-ում որպես հակակոռուպցիոն մարմնի գործունեության հիմնական սկզբունք նշվում է **բավարար ռեսուրսների առկայությունը**: Նմանատիպ պահանջ ամրագրված է նաև ՄԱԿ-ի

«Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան կոռուպցիայի դեմ պայքարի մարմինն կամ մարմիններին պետք է տրամադրի անհրաժեշտ նյութական պաշարներ և մասնագիտացված անձնակազմ: Նմանատիպ պահանջ ամրագրված է նաև «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի 20-րդ հոդվածում, համաձայն որի՝ կողմերը պետք է ապահովեն, որ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացած մարմինների աշխատակազմերն իրենց գործունեության իրականացման համար ունենան բավարար պատրաստվածություն և ֆինանսական միջոցներ: Հետևաբար, կարող ենք նշել, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացած մարմնի գործունեության արդյունավետության ապահովման հիմնական երաշխիքներից մեկը բավարար նյութական պաշարների և մասնագիտացած անձնակազմի առկայությունն է:

ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի անկախության ապահովման վրա որոշակի ազդեցություն է ունենում այն հանգամանքը, որ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը չունի ֆինանսական և նյութատեխնիկական անկախության բավարար երաշխիքներ: Խնդիրը կայանում է նրանում, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործունեության նյութատեխնիկական և կազմակերպական աջակցությունն իրականացնում է Հանրապետության Նախագահի աշխատակազմը, ինչը եթե նույնիսկ չի խոչընդոտում ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի անկախությանը, այնուամենայնիվ հասարակական ընկալումներում կարող է այդպիսի տպավորություն ստեղծել: Հետևաբար, յուրաքանչյուր պետական մարմնի, այդ թվում նաև ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի անկախության ամրապնդման և գործունեության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի նյութատեխնիկական և կազմակերպական անկախության ապահովումը:

Խնդիր 1.4. Գործող օրենսդրությամբ առկա են որոշակի խնդիրներ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի հանրային հաշվեպնդականության և թափանցիկության ապահովման տեսանկյունից: Հանրային ծառայողների

բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման ոլորտում տեսանելի արդյունքի հասնելու հիմնական երաշխիքներից մեկը թափանցիկության և հաշվետվողականության ապահովումն է: Այսպիսի պահանջ ամրագրված է մի շարք միջազգային իրավական ակտերով, մասնավորապես ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 10-րդ հոդվածը նույնպես ամրագրում է հանրային հաշվետվողականության սկզբունքը, իսկ «Հակակոռուպցիոն մարմինների վերաբերյալ սկզբունքների Ջակարտայի հայտարարություն»-ը հռչակում է կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացված մարմինների հանրային հաշվետվողականության սկզբունք, որը ենթադրում է օրենսդրության պահանջները խստորեն պահպանելու և իրենց գործունեության վերաբերյալ հանրությանը պաշտոնապես առնվազն տարեկան կտրվածքով հաշվետվություն ներկայացնելու անհրաժեշտություն: «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի մեկնաբանություններում նշվում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմինների անկախությունը չպետք է լինի բացարձակ, այդ մարմիններին վերապահված անկախության և ինքնուրույնության աստիճանը պետք է լինի այնպիսին, որն անհրաժեշտ է վերջիններիս լիազորությունները պատշաճ կերպով իրականացնելու համար: Հետևաբար՝ հանրային ծառայողների բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման ոլորտում մասնագիտացված մարմինները պարտավոր են կանոնավոր կերպով հասարակությանը ներկայացնել գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, ինչպես նաև ապահովել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության՝ հանրության համար մատչելիությունը:

ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործունեության հաշվետվողականության ապահովման բավականին սահմանափակ մեխանիզմներ է նախատեսել, մասնավորապես՝ 43-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում է *շահերի բախման բացահայտված դեպքերը* և դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները: Հետևաբար, նշված դրույթից բխում է, որ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում միայն շահերի բախման

բացահայտված դեպքերի և դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ, ինչը խիստ սահմանափակ է և չի ապահովում ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործունեության ամբողջական թափանցիկությունը և հասարակական հաշվետվողականությունը: Բացի այդ, ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի կողմից նշված գործառույթի իրականացումը հայեցողական բնույթ է կրում, քանի որ այն համարվում է ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի իրավունքը: Այս առումով միջազգային փորձի վերլուծությունից նույնպես բխում է, որ մի շարք պետություններում (Լեհաստան, Սերբիա, Կոսովո, Լիտվիա, Լատվիա) կոռուպցիայի դեմ մասնագիտացած մարմինները իրենց գործունեության վերաբերյալ պարբերաբար հաշվետվություններ են ներկայացնում հասարակությանը և իրավասու պետական մարմիններին:

խնդիր 1.5. Գործող օրենսդրությամբ առկա են որոշակի խնդիրներ կապված ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի կողմից հարուցվող վարույթների հետ:

Հանրային ծառայողների բարեվարքության ամրապնդման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի հանրային ծառայողների կողմից վարքագծի կանոնների խախտման դեպքում համապատասխան վարույթների հարուցումը, դրանց արդյունքում որոշումների ընդունումը և այդ որոշումների կատարման ապահովումը: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նշված հարաբերությունները կարգավորող նորմերի ուսումնասիրությունից բխում է, որ այս ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, մասնավորապես, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վարույթ կարող է հարուցվել ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի նախաձեռնությամբ և անձի դիմումի հիման վրա կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի դիմումի հիման վրա, ինչը ըստ էության բավականին սահմանափակ է: Հետևաբար, այս ոլորտում ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով օրենսդրությամբ անհրաժեշտ է նախատեսել վարույթների հարուցման այլ հիմքեր:

Բացի այդ, գործող իրավակարգավորումների պայմաններում առկա են որոշակի խնդիրներ՝ կապված վարչական վարույթի արդյունքում ընդունված որոշումների կատարման ապահովման հետ: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի համաձայն՝ էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ

ԲՊԱ Էթիկայի հանձնաժողովն ընդունում է եզրակացություն, որն ուղարկվում է Հանրապետության նախագահին և բարձրաստիճան պաշտոնատար անձի վերադասին: Այսպիսի իրավակարգավորման պայմաններում հստակեցված չեն այն մեխանիզմները, որոնց միջոցով ԲՊԱ Էթիկայի հանձնաժողովը կկարողանա ներգործություն ունենալ իր կողմից ընդունված եզրակացության կատարման գործընթացի վրա: Միաժամանակ գործող օրենսդրությամբ բավարար չափով հստակեցած չեն բարձրաստիճան պաշտոնատար անձանց և հանրային ծառայողներին պատասխանատվության ենթարկելու հիմքերը, ինչպես նաև պատասխանատվության միջոցները, որոնք վարույթի արդյունքում կարող են կիրառվել հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի նկատմամբ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է նախատեսել բավարար մեխանիզմներ վարույթի ընթացքում տեղեկատվություն հայտնաձև անձանց իրավունքների պաշտպանության համար:

Խնդիր 1.6. Գործող օրենսդրությամբ առկա են որոշակի խնդիրներ՝ կապված գույքի և եկամուտների հայտարարագրման հետ: Սույն օրենսդրական կարգավորումների շրջանակներում առկա են որոշակի խնդիրներ՝ կապված գույքի և եկամուտների հայտարարագրման հետ: Գույքի և եկամուտների հայտարարագրման ոլորտում փոփոխությունների իրականացումը բխում է միջազգային և ներպետական մի շարք կառույցների առաջարկությունների հիման վրա օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունից: Այսպես, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N1141-Ն որոշման 1-ին հավելվածով՝ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Միջոցառումների ծրագիր) 16-րդ կետով, նախատեսվում է հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավումը՝ որպես օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման կարևոր նախադրյալ, որն էլ ենթադրում է հայտարարագիր ներկայացնող հանրային ծառայողների շրջանակի վերանայում: Բացի այդ, Միջոցառումների ծրագրի 14-րդ կետով նախատեսվում է վարքագծի կանոնագրքերի պահանջների՝ ներառյալ շահերի բախման կանոնների, անհամատեղելի

գործունեության և այլ խախտումների համար պատասխանատվություն նախատեսելու պահանջ:

Հայտարարագրման համակարգի կատարելագործման, ինչպես նաև հանրային ծառայողների կողմից վարքագծի կանոնների խախտումների բացառման պահանջը բխում է նաև Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) կողմից չորրորդ գնահատման փուլի շրջանակում «Կոռուպցիայի կանխարգելումը խորհրդարանի անդամների, դատավորների և դատախազների շրջանում» թեմայով Հայաստանի Հանրապետության վերաբերյալ զեկույցով տրված հանձնարարականներից, որոնցով, մասնավորապես, առաջարկվում է.

«iii. որ համապատասխան միջոցներ ձեռնարկվեն՝ կանխելու համար առևտրային կազմակերպությունում պաշտոն զբաղեցնող պարզամավորների նկատմամբ կիրառվող և նրանց կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու կամ ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում այլ վճարովի աշխատանք կատարելու սահմանափակումների շրջանցման հնարավորությունները ...

(...)XVII. որ հետագայում կատարելագործվեն պարզամավորների, դատավորների և դատախազների նկատմամբ կիրառվող՝ գույքի հայտարարագրերի գործող համակարգը՝ օրենքով սահմանելով հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը եւ բացառելով միայն այն տեղեկությունների հրապարակումը, որոնց գաղտնիության պահպանումն անհրաժեշտ է անձնական կյանքի անձեռնմխելիության նկատառումներից ելնելով, և որ ընդլայնվի հայտարարագրման համակարգի կիրառման շրջանակը, որպեսզի հնարավոր լինի ընդգրկել բոլոր դատախազներին...

...XVI. որ հետագայում մշակվեն պարզամավորների, դատավորների եւ դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, կներմուծեն մոնիթորինգ իրականացնող համապատասխան մարմին ստացված նվերների մասին հաղորդում ներկայացնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ կնվազեցվեն գործող այն

շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հաղորդում ներկայացնել(...)»։ ԳՐԵԿՈՒ-ի այս հանձնարարությունից բխում է, որ վերջինս ևս անհրաժեշտ է համարում հանրային ծառայողների հայտարարագրման և նվերների համակարգի վերանայումը։

ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում գործում է գույքի և եկամուտների էլեկտրոնային հայտարարագրման համակարգը, որն ապահովում է հայտարարագրման գործընթացի պարզեցումը և հայտարարագրված տվյալների թափանցիկությունն ու հանրային հասանելիությունը, այդուհանդերձ՝ ներդրված համակարգն ամբողջական չէ և բարելավման կարիք ունի։ Մասնավորապես, ամբողջական չէ հայտարարագրերի վերլուծության համար անհրաժեշտ գործիքակազմը։

Խնդիր 1.7. Գործող օրենսդրությունը հայտարարագրման հետ կապված խախտումների համար պատասխանատվության միջոցներ չի նախատեսում։

Խոսելով հայտարարագրման հետ կապված խախտումների համար վարչական պատասխանատվության մասին՝ հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի ընդունումից հետո՝ 2011 թվականի նոյեմբերի 29-ին ուժը կորցրած ճանաչվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169¹⁷-րդ հոդվածը, որը վարչական պատասխանատվություն էր սահմանում մինչ այդ գործող հայտարարագրման օրենսդրության պահանջների խախտման համար։ Մասնավորապես՝ 169¹⁷-րդ հոդվածով նախատեսվում էր տուգանք ֆիզիկական, այդ թվում՝ քաղաքական կամ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի մեջ կեղծ տվյալներ մտցնելու կամ հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու համար։ Սակայն նշված դրույթների ուժը կորցրած ճանաչվելուց հետո «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից բխող՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց հայտարարագրման հետ կապված խախտումների համար վարչական պատասխանատվություն ներկայումս սահմանված չէ։

Անդրադառնալով խնդրո առարկա հայտարարագրերի ներկայացման օրենսդրական կառուցակարգերի վերաբերյալ միջազգային առաջադեմ երկրների

փորձին՝ հարկ ենք համարում ներկայացնել մի շարք երկրների փորձը, որոնց հակակոռուպցիոն համակարգերը, թերևս, հանդիսանում են ամենագործունեները: Մասնավորապես՝ **Լատվիայի Հանրապետության** հակակոռուպցիոն համակարգը հանդիսանում է ամենագործուն մեխանիզմը հետխորհրդային տարածաշրջանում: Դրա հիմքում ընկած է «Տեղեկատվության ազատության մասին» և «Պաշտոնատար անձանց գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» (Law on Prevention of Conflict of Interest in Activities of Public Officials) օրենքները: Վերջինիս 4-րդ հոդվածը տարածում է օրենքի գործողությունը սուբյեկտների ավելի լայն շրջանակների վրա՝ նախագահից մինչև զինվորներ, դատախազներ և տեղական խորհուրդների անդամներ, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներ և ազգականներ: Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի միակ տեղեկությունը, որը չի կարող հրապարակվել, հանդիսանում է պաշտոնատար անձի բնակության վայրը, ինչպես նաև նրա անձի նույնականացման տվյալը:

«Պաշտոնատար անձանց գործունեության շահերի բախման կանխարգելման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը պարտավորեցնում է հայտարարագիր ներկայացնողին ապացուցել հայտարարագրում ներկայացված տվյալների հավաստիությունը: Եթե պաշտոնատար անձը չի կարողանում ապացուցել այն կամ ստուգումը հայտնաբերում է հայտարարագրում ներկայացվող տվյալների խեղաթյուրում, ապա այդպիսի արարքը գնահատվում է որպես գույքի ապօրինի ձեռքբերում և վերջինիս քողարկում պետությունից:

Հիշյալ օրենքով պաշտոնատար անձանց համար սահմանված է միայն քաղաքացիաիրավական պատասխանատվություն՝ պետությանը պատճառված վնասի ամբողջ ծավալով հատուցման ձևով:

Լատվիայի Հանրապետության Քրեական օրենսգրքի 219-րդ հոդվածը, նախատեսելով «հայտարարագիր ներկայացնելուց խուսափել» հանցակազմը, չի տարանջատում հայտարարագիր ներկայացնող ֆիզիկական անձին պաշտոնատար անձից: Նշյալ հոդվածը նախատեսում է՝ անձը, ով դիտավորությամբ հայտարարագրում ներկայացրել է կեղծ տվյալներ, և այդ կեղծ տվյալները վերաբերում են գույքի կամ այլ եկամուտների **մեծ ծավալին**, պատժվում է որոշակի ժամկետով ազատազրկմամբ կամ հանրային աշխատանքով կամ տուգանքով: Այն դեպքում, երբ անձը դիտավորությամբ հայտարարագրում ներկայացրել է կեղծ

տվյալներ գույքի կամ այլ եկամուտների աղբյուրի վերաբերյալ, և երբ այդ կեղծ տվյալները վերաբերում են գույքի կամ այլ եկամուտների մեծ ծավալին, պատժվում է որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ մինչև 2 (երկու) տարի ժամկետով, կամ հանրային աշխատանքով կամ տուգանքով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Լիտվայի Հանրապետության գույքի հայտարարագրմանն առնչվող օրենսդրական համակարգը ներառում է այնպիսի դրույթներ, որոնք վերաբերում են ընդհանուր թափանցիկության ապահովմանը, կոռուպցիայի դեմ պայքարի համար անհրաժեշտ բոլոր միջոցների կիրառմանը, ֆինանսական մոնիթորինգին, ապօրինի հարստացմանը, ինչպես նաև շահերի բախման կանխարգելմանը:

Լիտվայի Հանրապետությունում գործում է երկակի մեխանիզմ՝ ապահովելով պետական կառավարման ամբողջականությունը և թափանցիկությունը:

- ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրում,
- մասնավոր շահերի հայտարարագրում:

Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը ընդունվել է 1993 թվականին և էլեկտրոնային ֆորմատ է ստացել 2004 թվականից:

Գույքի և եկամուտների հայտարարագրման և շահերի բախման կանխարգելման վերաբերյալ Լիտվայի օրենսդրական դաշտը ներառում է հետևյալ իրավական ակտերը՝ «Ռեզիդենտների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին», «Պետական ծառայության շրջանակներում հանրային և մասնավոր շահերի համաձայնեցման մասին» և «Էթիկայի հանձնաժողովի մասին» օրենքները:

Հայտարարագրման պահանջները խախտելու դեպքում նախատեսված են **կարգապահական և վարչական պատժատեսակներ**. օրինակ՝ հասարակական նկատողություն, սահմանափակող միջոցներ և արգելքներ, պաշտոնի առաջխաղացման սահմանափակումներ մինչև 1 (մեկ) տարի ժամկետով կամ զբաղեցրած պաշտոնից ազատում և քաղաքացիական ծառայության ոլորտում պաշտոն զբաղեցնելու արգելք մինչև 3 տարի ժամկետով:

Այն ֆիզիկական անձինք, ովքեր պարտավոր են ներկայացնել գույքի և եկամուտների հայտարարագիր, խուսափում են այն ներկայացնելուց, կամ ներկայացնում են ժամկետների խախտմամբ կամ կեղծ տեղեկատվություն են

տրամադրում, կրում են վարչական կամ քրեական պատասխանատվություն: Մասնավորապես՝ Լիտվայի քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածն ամրագրում է՝ անձը, ով ձգտելով թաքցնել կամ օրինականացնել արգելված եղանակներով գումարի կամ գույքի ձեռքբերումը, ներկայացնում է կեղծ հայտարարագիր այդպիսի ճանապարհով ձեռք բերված գումարի կամ գույքի ձեռքբերման վերաբերյալ, պատժվում է ազատազրկմամբ մինչև 7 (յոթ) տարի ժամկետով:

Իսպանիայի Թագավորությունում ներկայացված հայտարարագրերի հավաստիության առնչությամբ ստուգումներ կարող են նախաձեռնվել՝

- համապատասխան բողոքը ստանալիս,
- ի պաշտոնե,
- հայտարարագիր չներկայացնելու կամ ոչ ժամանակին ներկայացնելու դեպքում,
- եկամուտի օրինական աղբյուրի և հայտարարագրված ակտիվների անհամապատասխանելիության դեպքում:

Շահերի բախման գործակալությունը ունի անմիջական հասանելիություն ցանկացած հայտարարագրերի նկատմամբ: Իրավախախտումների հայտնաբերման դեպքում շահերի բախման գործակալությունը գործը փոխանցում է դատարանի քննությանը և դադարեցնում է իր գործունեությունը մինչ դատարանի կողմից վճիռ կայացնելը:

Իսպանիայում հայտարարագրման ամբողջ գործընթացը իրականացվում է շահերի բախման գործակալության կողմից:

Այն դեպքերում, երբ հայտարարագիրը պարունակում է կեղծ տեղեկատվություն կամ փաստաթղթեր, բացակայում է համապատասխան պայմանագիրը կնքված արժեթղթերի ազգային հանձնաժողովի հետ կամ չհայտարարագրված գումարը գերազանցում է 100 000 (հարյուր հազար) եվրոն, ինչպես նաև առկա է անհամապատասխանություն ներկայացված և իրական տվյալների միջև, այս դեպքերում կիրառվում են հետևյալ պատժատեսակները.

- Իսպանիայի պաշտոնական տեղեկագրում իրավախախտման հրապարակում.
- **պաշտոնից հեռացում.**
- փոխհատուցման իրավունքից զրկում.

- գլխավոր դատախազությանը ծանուցում.
- պաշտոն զբաղեցնելու արգելք մինչև հինգ տարի ժամկետով:

Նախագգուշացում ստանալուց հետո գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագիր ռեգիստր չներկայացնելու, դիտավորությամբ որոշակի տվյալներ թերի ներկայացնելու դեպքում Իսպանիայի պաշտոնական տեղեկագրում իրավախախտման հրապարակում է տեղի ունենում: Իսկ գույքի և եկամուտների վերաբերյալ հայտարարագիրը ուշացումով ներկայացնելու դեպքում, տվյալ բարձրաստիճան անձը կարող է ստանալ նախագգուշացում:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1978 թվականին Կոնգրեսն ընդունել է «Հանրային ծառայողների վարքագծի էթիկայի մասին» ակտը (Ethics in Government Act, Ethics Act): Հիշյալ ակտը նախատեսում է նախագահի, փոխնախագահի, Կոնգրեսի անդամների, ինչպես նաև մյուս բոլոր պետական պաշտոնյաների և աշխատակիցների կողմից ֆինանսական տվյալների ամենամյա ներկայացում:

«Հանրային ծառայողների վարքագծի էթիկայի մասին» ակտի § 104-ով հայտարարագրի չներկայացման դեպքում նախատեսվում է պատասխանատվություն տուգանքի տեսքով՝ մինչև 50000 (հիսուն հազար) դոլարի չափով: Հիշյալ նորմի (A)(i) կետով հայտարարագրում դիտավորությամբ կեղծ տվյալներ ներկայացնելու դեպքում նախատեսվում է ազատազրկում մինչև 1 (մեկ) տարի ժամկետով կամ քննարկվող երկու պատժատեսակների միաժամանակյա համադրում:

Կանադայում օրենսդրությունը հայտարարագրեր ներկայացնող անձանց բավականին լայն շրջանակ է նախատեսում՝ Խորհրդարանի պաշտոնատար անձանցից մինչև կանադական թագավորական հեծյալ ոստիկանության սպաները: Հայտարարագրերի ներկայացման բոլոր պահանջները նախատեսված են Շահերի բախման և պաշտոնատար անձանց հետաշխատանքային հարաբերությունների մասին օրենսգրքում (Conflict of Interest and Post-Employment Code for Public Office Holders):

Բացի այդ, 2006 թվականին Կանադայում ընդունվել է «Պետական հաշվետվության մասին» ակտը (այսուհետ՝ Ակտ), որը նախատեսում է էթիկայի հարցերով հանձնակատարի հաստիքի, ինչպես նաև Շահերի բախման գրասենյակի ստեղծումը, որոնց պարտականությունների մեջ է մտնում Ակտի կատարման ստուգումը:

Կանադայում հայտարարագրերի ներկայացման վերաբերյալ պատասխանատվության հարցում տարանջատվում են երեք խումբ՝ անձինք՝ Խորհրդարանի անդամներ, պաշտոնատար անձինք և քաղաքացիական ծառայողներ: Խորհրդարանի անդամների կողմից հայտարարագրերի ներկայացումը կարգավորվում է Ակտով, սակայն վերջինս չի նախատեսում կարգավորումներ այդպիսի անձանց պատասխանատվության առնչությամբ: Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ Ակտով կարգավորվում են պաշտոնատար անձանց հայտարարագրերի ներկայացման և դրանց վերաբերյալ պատասխանատվության չափերին առնչվող հարցերը: Մասնավորապես՝ հայտարարագրերի **ներկայացման ժամկետների խախտման դեպքում առավելագույն տուգանքը, որը կարող է նշանակվել, կազմում է 500 (հինգ հարյուր) դոլար:** Ինչ վերաբերում է քաղաքացիական ծառայողներին, ապա հարկ է նշել, որ վերջիններիս պատասխանատվությունը նախատեսված է գերատեսչական ակտերով:

Արգենտինայի Հանրապետությունում խնդրո առարկա հայտարարագրերին առնչվող հիմնական իրավական ակտը 1999 թվականին ընդունված «Հանրային ծառայողների էթիկայի մասին» օրենքն է (Ley de Ética en la Función Pública): Հիշյալ օրենքը պարտավորեցնում է բոլոր պետական ծառայողներին ներկայացնել եկամուտների հայտարարագիր, ինչպես նաև այլ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է շահերի բախումը կանխելու համար:

Ինչ վերաբերում է պաշտոնատար անձանց պատասխանատվությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ Արգենտինայի Քրեական օրենսգրքի 268(3) հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն դիտավորությամբ խեղաթյուրված տվյալներ հայտարարագրելու կամ հայտարարագիր չներկայացնելու համար: Մասնավորապես՝ օրենսգիրքը դիտավորությամբ խեղաթյուրված տվյալներ հայտարարագրելու կամ հայտարարագիր չներկայացնելու համար նախատեսում է սանկցիա, այն է՝ ազատազրկում՝ տասնհինգ (15) օրից մինչև երկու (2) տարի ժամկետով:

Պերուի Հանրապետությունում հայտարարագրերի ներկայացման պահանջը նախատեսված է Պերուի 1993 թվականի Սահմանդրությամբ:

Ղեկավարվելով Սահմանադրությամբ՝ 2002 թվականի հուլիսի 13-ին ընդունվել է «Հանրային տեղեկատվության թափանցիկության և հասանելիության մասին» օրենքը (Law on Transparency and Access to Public Information), որն արտացոլում է այդ երկրի ևս մեկ առանձնահատկություն՝ հանրային անձանց եկամուտներին առնչվող տեղեկատվության դուրսբերումը մասնավոր կյանքին վերաբերող տեղեկատվության շրջանակներից, ինչպես նաև անհատականությունների ամբողջական հասանելիություն՝ իրենց իրավունքներին և ազատություններին վերաբերող տեղեկատվություն ստանալու համար: Այս սկզբունքը կոչվում է *habeas data*, որը գործում է և՛ Բրազիլիայում, և՛ Պարագվայում, և՛ Ֆիլիպիններում:

Ինչ վերաբերում է պատասխանատվությանը, ապա Պերուի Քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվություն հայտարարագրերը չներկայացնելու, դրանք ոչ ճիշտ ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև խեղաթյուրված տվյալներ ներկայացնելու դեպքերում: Որպես սանկցիա՝ օրենսգիրքը նախատեսում է ազատազրկում՝ մինչև երկու (2) տարի ժամկետով, ինչպես նաև տուգանք՝ երեսունից (30) վաթսուն (60) օրով (Պերուում տուգանքը հաշվարկվում է օրերով. սահմանված գումարը (դրույքաչափը) բազմապատկվում է օրերի քանակով՝ արդյունքում ստանալով տուգանքի ընդհանուր չափը):

Ֆիլիպինների Հանրապետությունում 1989 թվականից սկսած հայտարարագրերի ներկայացում է նախատեսված պետական բոլոր ծառայողների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց կանանց և չամուսնացած երեխաների համար:

Միևնույն ժամանակ, Ֆիլիպինների Սահմանադրության 11-րդ հոդվածի 17-րդ մասը նախատեսում է պետական ծառայողների գույքի վերաբերյալ տեղեկություններ ստանալու իրավունքը:

Պետական պաշտոնատար անձանց և աշխատակիցների վարքագծի և էթիկայի կանոնների վերաբերյալ օրենսգրքի (Code of Conduct and Ethical Standards for Public Officials and Employees) 8-րդ հոդվածը սահմանում է, որ պետական բոլոր ծառայողների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև նրանց կանանց և չամուսնացած երեխաների հայտարարագիրը պետք է պարունակի տեղեկություններ այդպիսի անձանց անշարժ գույքի, անձնական այլ սեփականության, ավանդների, պարտավորությունների, ինչպես նաև բաժնետոմսերի վերաբերյալ:

Նշյալ օրենսգրքի 11-րդ հոդվածը հայտարարագրերի ներկայացման ընթացակարգային, ինչպես նաև հայտարարագրերի բովանդակությանը վերաբերող պահանջների խախտումների դեպքում նախատեսում է անբարենպաստ հետևանք՝ տուգանքի կամ (և) ազատազրկման ձևով: Մասնավորապես՝ օրենսգրքի հիշյալ հոդվածի (a) մասի համաձայն՝ օրենսգրքի 7-րդ(պետական պաշտոնատար անձանց և աշխատակիցների վարքագծին ներկայացվող պահանջներ), 8-րդ(հայտարարագրի բովանդակությանը ներկայացվող պահանջներ, հայտարարագրի հրապարակման ժամկետներին ներկայացվող պահանջներ) և 9-րդ(շահերի բախումից խուսափում) հոդվածների խախտման դեպքում անձը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 5(հինգ) տարի ժամկետով, **կամ տուգանքով՝ մինչև 5000 (հինգ հազար) պետյի չափով**, կամ միաժամանակ երկու պատժատեսակները կարող են համադրվել: Բացի այդ, հարկ է նշել, որ դատարանի հայեցողությանն է թողնված պաշտոնատար անձի՝ պետական ծառայությունից հեռացումը:

Տեղին է նաև վկայակոչել այն հանգամանքը, որ Ֆիլիպիններում (ինչպես Պերուում) ևս գործում է habeas data սկզբունքը:

Սինգապուրի Հանրապետությունում 1960 թվականի հունիսի 17-ին ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» (The Prevention of Corruption Act) ակտը:

Հիշյալ ակտում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում պաշտոնատար անձինք պարտավորվում են հայտարարագրել ինչպես իրենց, այնպես էլ իրենց կանանց և երեխաների հարստությունը (անշարժ գույք, բանկային հաշիվներ, բաժնետոմսերի փաթեթ և այլն): Ընդ որում՝ եթե պաշտոնատար անձը չի կարողանում բացատրել, թե որտեղից են առաջացել հավելյալ ֆինանսական միջոցները, ապա ենթադրվում է, որ այդպիսի միջոցների աղբյուրը կոռուպցիան է: Այդ դեպքում կատարվում է համապատասխան ստուգում, որի ընթացքում դատախազն իրավունք ունի ստուգելու այն պաշտոնատար անձի ցանկացած բանկային, բաժնետոմսային հաշիվը, ով կասկածվում է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ակտի դրույթների խախտման մեջ:

Բացի այդ, հայտարարագրված հարստության և ստացվող աշխատավարձի միջև անհամապատասխանությունն առնվազն հանգեցնում է վարչական

հետաքննության: Եթե պաշտոնատար անձը տնօրինում է մասնավոր կազմակերպությունների որևէ բաժնեմասը, ապա նրան կարող են առաջարկել վաճառել իր բաժնեմասը և խուսափել շահերի բախումից:

Հատկանշական է՝ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ակտի 8-րդ հոդվածը նախատեսում է մեղավորության կանխավարկածի հիմնադրույթը: Ցանկացած պարգևատրման դեպքում պաշտոնատար անձը պարտավոր է ապացուցել, որ այդպիսի պարգևատրումը չի ստացվել կոռուպցիոն մեխանիզմի շրջանակներում:

Ուկրաինայի Հանրապետությունում հայտարարագրման իրավահարաբերությունների հետ կապված կարգապահական և վարչական պատժամիջոցները սահմանված են ֆինանսական խախտումների բացահայտման նպատակով («Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքի 9-րդ հոդված, «Ուկրաինայի քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդված և «Տեղական ինքնակառավարման մարմինների ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդված): Երբ անձը ժամանակին չի ներկայացնում ակտիվների հայտարարագիր, ապա այդ փաստի վերաբերյալ պաշտոնական ծանուցագիր է գրվում և ներկայացվում նրա ղեկավարին (ֆինանսական վերահսկման դրույթները խախտած անձի բացատրագրի հետ միասին): Այս ամենի հիման վրա ղեկավարը որոշում է կայացնում այդ անձին քաղաքացիական ծառայությունից հեռացնելու վերաբերյալ: Պաշտոնից ազատման հիմքերի մասին գրառում կատարվում է անձի աշխատանքային գրքույկում: Ներկայացված ձևաթղթում սխալ, կեղծ կամ թերի տեղեկությունը կարող է հանգեցնել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով և կարող է հիմք հանդիսանալ պետական մարմիններում ընտրվելու կամ պաշտոնի առաջխաղացման հնարավորություններից զրկվելու համար:

Ռուսաստանի Դաշնությունում քննարկվող իրավախախտման համար սահմանված է պաշտոնեական լիազորություններից զրկում: Այսպես, 2015 թվականի նոյեմբերի 4-ին ՌԴ Նախագահի կողմից ստորագրված օրենքի համաձայն՝ օրենքով սահմանված ժամկետում գույքի և եկամուտների հայտարարագրի բացակայության դեպքում պատգամավորները, ինչպես նաև սենատորները և տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնյաները կզրկվեն պաշտոնեական լիազորություններից:

Վրաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է նախատեսում գույքի հայտարարագիր չներկայացնելը կամ հայտարարագրում ոչ ամբողջական կամ սխալ տվյալներ ներկայացնելը հանցակազմի համար: Մասնավորապես՝ Վրաստանի քրեական օրենսգրքի 355-րդ հոդվածը նախատեսում է՝ գույքի հայտարարագիրը չներկայացնելը, որը կատարվել է նույն արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո, կամ հայտարարագրում ակնհայտ ոչ ամբողջական կամ սխալ տվյալներ ներկայացնելը պատժվում է **տուգանքով** կամ հանրային աշխատանքով՝ 120 (հարյուր քսան) ժամից մինչև 200 (երկու հարյուր) ժամ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը 3 (երեք) տարի ժամկետով:

Ռումինիայի Հանրապետությունում գույքի և եկամուտների հայտարարագրումը կոռուպցիայի դեմ պայքարի մի մասն է կազմում: Վերջինիս իրականացման նպատակները հետևյալն են.

- վերահսկողական քաղաքականության իրականացում շահերի բախման նկատմամբ.
- հանրային վստահության ամրապնդում և պաշտոնյաների հաշվետվողականության ապահովում.
- միջազգային պահանջների իրականացում.
- ԵՄ-ի անդամակցության պահանջների կատարում.
- պետական գործառույթների իրականացման թափանցիկության ապահովում.
- հանրային շահերի բախումը կարգավորող իրավական ակտերի կյանքի կոչում.
- կոռուպցիայի դեմ պայքարում վարչական պատասխանատվության կիրառման ընդլայնում:

Հայտարարագրման ինստիտուտը Ռումինիայում ներդրվել է 1996 թվականին, որից հետո համակարգը առաջխաղացում է ապրել: Ի սկզբանե հայտարարագրերը ենթակա չէին հրապարակման, սակայն 2002 թվականից ստացել են նաև հրապարակային բնույթ: Ընդ որում՝ հայտարարագրման են ենթակա բոլոր այն

եկամուտները, ավանդները, պահանջները, որոնք գերազանցում են 10.000 (տասը հազար) եվրոյի, իսկ նվերները՝ 300 (երեք հարյուր) եվրոյի շեմը:

Անդրադառնալով պատասխանատվությանը՝ հարկ է նշել, որ խնդրո առարկա **հայտարարագիրը չներկայացնելու կամ սահմանված ժամկետում չներկայացնելու, հայտարարագրում ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու դեպքում նախատեսվում է վարչական պատասխանատվություն:** Վերջինիս առավել խիստ ձևը զբաղեցրած պաշտոնից ազատումն է:

2002 թվականին տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում նախատեսվեց նաև քրեական պատասխանատվություն գույքի և եկամուտների հայտարարագրերի ոչ պատշաճ լրացման կամ դրանց չներկայացման համար՝ սահմանելով ազատազրկում՝ 3 (երեք) ամսից մինչև 3 (երեք) տարի ժամկետով, ինչպես նաև տուգանք:

Ուսումնասիրված երկրների փորձը վկայում է, որ տարբեր երկրներում գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացման հետ կապված պարտականությունները չկատարելու խախտումները բաժանվում են երկու խմբի՝

1) հայտարարագրեր ներկայացնելու պարտականության հետ կապված խախտումներ (հայտարարագրեր ուշ ներկայացնելը, սահմանված կարգի խախտմամբ ներկայացնելը կամ չներկայացնելը),

2) տրամադրված տեղեկատվության բովանդակությանն առնչվող խախտումներ, ինչը ներառում է ոչ ամբողջական տեղեկատվություն տրամադրելը, անզգուշությամբ սխալ տեղեկություններ տրամադրելը և դիտավորությամբ կեղծ տեղեկություններ տրամադրելը:

Ընդ որում՝ հարկ է նաև նշել, որ վերոնշյալ իրավախախտումների համար տարբեր երկրներում նախատեսվում են պատասխանատվության հետևյալ տեսակները՝

- 1) կարգապահական,
- 2) վարչական,
- 3) քրեական,
- 4) քաղաքացիաիրավական:

Խնդիր 1.8. Գործող օրենսդրությունը չի պարունակում անհրաժեշտ երաշխիքներ ազդարարների պաշտպանության համար, գործնականում

նույնպես առկա են ազդարարմանն առնչվող մի շարք ռիսկեր: Խոսելով ազդարարների պաշտպանության համատեքստում միջազգային մակարդակով կատարված հարցումներից և դրանց հիման վրա կազմված վիճակագրական տվյալներից՝ հարկ է նշել հետևյալը. Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության 2015 թվականի Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հարցվածների 67 տոկոսը (2013 թվականին ևս նույն ցուցանիշն է) չի բարձրաձայնի կոռուպցիոն դեպքերի մասին, եթե դրանց առնչվի կամ ականատեսը լինի: Այս ցուցանիշով Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանի 42 երկրների մեջ գտնվում է վերջին տեղում: Ընդ որում՝ ամենից հաճախ որպես պատճառ բերվում էր վախը հնարավոր հետևանքներից (41 տոկոս):

Այս արդյունքները ևս մեկ անգամ ապացուցում են ազդարարների պաշտպանության մասին օրենսդրության ընդունման և ազդարարների պաշտպանությանն ուղղված գործունեության երաշխիքների ներդրման անհրաժեշտության այժմեականությունը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ օրենսդիրը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում արդեն իսկ ամրագրել է որոշ դրույթներ, որոնք ուղղված են ազդարարների պաշտպանությանը: Սակայն դրանք բովանդակում են առկա խնդրի միայն մի հատվածի լուծումները:

Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված օրենսդրական կառուցակարգի շրջանակներում պաշտպանություն են ստանում միայն այն ազդարարները, որոնք արդեն իսկ ստացել են դատավարական կարգավիճակ: Մասնավորապես՝ նշյալ օրենսգրքի 98-րդ հոդվածն ամրագրում է առ այն, որ քրեական դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Ինչ վերաբերում է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի շրջանակներում ազդարարների պաշտպանությանը, ապա հարկ է նշել, որ նշյալ օրենքը և դրա հիման վրա ընդունված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Հանրային ծառայողի կողմից ծառայողական պարտականությունների կատարման բերումով այլ ծառայողների կատարած իրավախախտումների և հանրային ծառայությանն առնչվող անօրինական, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի գործողությունների մասին համապատասխան պաշտոնատար անձանց, իրավասու պետական մարմիններին տեղեկացնելու և հանրային ծառայողի անվտանգության երաշխավորման կարգը սահմանելու մասին» թիվ 1816-Ն որոշումը կարգավորում են միայն այն ազդարարների պաշտպանությունը, ովքեր հանդիսանում են հանրային ծառայողներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1141-Ն որոշման 1-ին հավելվածի 60-րդ և 61-րդ կետերի համաձայն՝

«60. (...) Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկան անհրաժեշտ պայմաններ՝ ազդարարման համար: Առկա չեն այս գործունեությունը կարգավորող բավարար և համապարփակ օրենսդրական կարգավորումներ: Բացի դրանից, ձևավորված չէ հասարակությանը կոռուպցիայի դեմ պայքարին մղող դրական միջավայր (...)

կոռուպցիայի դեմ պայքարող մարմինների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու և ամրապնդելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ գործուն միջոցները՝

1) օրենքով սահմանել, որ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձինք հավասարապես օգտվում են տուժողների, վկաների և փորձագետների համար քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված հատուկ պաշտպանության միջոցներից.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում առանձին հոդվածով քրեական պատասխանատվություն նախատեսել հանցագործության

վերաբերյալ հաղորդում տալու համար հանցագործության վերաբերյալ հաղորդում տվող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց գույքին կամ առողջությանը վնաս պատճառելու կամ այդպիսի սպառնալիքի համար, ինչպես նաև հանցագործության վերաբերյալ հաղորդում տվող անձի՝ իրավապահ մարմնի ներկայացուցչի կողմից ոչ իրավաչափ գաղտնագերծման համար.

3) սահմանել, որ իրավապահ մարմինների հետ համագործակցության դեպքում կոռուպցիոն հանցանքներին առնչակից անձինք կարող են ազատվել քրեական պատասխանատվությունից կամ ակնկալել համեմատաբար մեղմ պատժվելու հնարավորություն.

4) հանրությանը պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ, այդ թվում՝ հրապարակել ամփոփ տեղեկատվություն ձևավորված կարգապահական, վարչական և դատական պրակտիկայի մասին.

5) հանրությանը պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն պետական ծառայողների պաշտոնանկության կամ տույժերի վերաբերյալ և հանրայնացնել հիմնավորումները՝ հաշվի առնելով անհատական տվյալների պաշտպանության և այլ երաշխիքների տրամադրման նկատառումները.

6) յուրաքանչյուր հանրային հաստատությունում ստեղծել մեխանիզմներ կոռուպցիոն իրավախախտումների առկայության դեպքում համապատասխան մարմիններին զեկուցելու վերաբերյալ և իրականացնել քարոզարշավ՝ հանրային ծառայողների շրջանում նման մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու համար.

7) կատարելագործել կոռուպցիոն բնույթի իրավախախտումների վիճակագրության վարման և հաշվետվություններ ներկայացնելու համակարգերը»:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է ազդարարների պաշտպանության օրենսդրական բացի կարգավորումը:

Ազդարարների պաշտպանության մոդելները տարբեր են ըստ իրավաընտանիքների և կոռուպցիայի դեմ ներպետական պայքարի առանձնահատկությունների: Այդպիսի մոդելներից առավել համակարգային է համարվում ոլորտի կարգավորումն առանձնացված օրենքով, ինչին իրենց բազմաթիվ զեկույցներում անդրադարձել են և՛ ՏՀԶԿ-ն, և՛ Թրանսփարենսի

Ինթերնեշնլ: Կարգավորման առանձնացված մոդելով են առաջնորդվել Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Ռումինիան, Սերբիան, Բոսնիա-Հերցեգովինան, իսկ Վրաստանի, Սլովենիայի և մի շարք այլ պետությունների կոռուպցիայի դեմ պայքարը կարգավորող ոլորտային օրենքներում առկա են ազդարարների պաշտպանությանն ուղղված օրենսդրական կառուցակարգեր:

Վերոնշյալ պետությունների սոցիալ-իրավական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ հարկ է անդրադառնալ դրանցից մի քանիսին:

Այսպես, *Ռումինիայի Հանրապետությունը*, 2004 թվականին ընդունելով «Ազդարարների պաշտպանության մասին» առանձնացված օրենք, դարձավ մայրցամաքային Եվրոպայի՝ ոլորտի առանձնացված կարգավորման ուղին ընտրող առաջին պետությունը: Նշյալ օրենքի 1-ին հոդվածն ամրագրում է. *«Սույն օրենքը կարգավորում է այն միջոցառումները, որոնք ուղղված են անձանց պաշտպանությանը, որոնք բողոքել կամ տեղեկացրել են հանրային իշխանությունների, հանրային ինտիմիտետների և այլ կառույցների գործունեության շրջանակներում գործադիր կամ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից 2-րդ հոդվածով նախատեսված գործողությունների կատարման մասին»:*

Հատկանշական է, որ, ըստ Թրանսփարենսի Ինթերնեյշնլի փորձագետների, Ռումինիայի Հանրապետության օրինակը զուտ տեսական առումով դիտարկվում է անհրաժեշտ լուծումներ բովանդակող, սակայն գործնական իմպլեմենտացիան դեռևս հեռու է լավագույնը համարվելուց (տե՛ս Whistleblowing Proteciton in Romania and Hungary. Marie Chene. 2013. Transparency International Secretariat): Բացի այդ, ՏՀՀ-ն և Թրանսփարենսի Ինթերնեյշնլը կարևորում են նաև մասնավոր ոլորտի ազդարարներին պաշտպանության հնարավորություն ընձեռելը:

Սերբիայի Հանրապետությունը «Ազդարարների պաշտպանության մասին» օրենքն ընդունել է 2014 թվականին: Տվյալ օրենքը գնահատվում է Եվրոպայում ազդարարների պաշտպանության օրենսդրական լավագույն մոդելներից մեկը: Սերբիայի օրենսդիրը համալիր կարգավորման է ենթարկել ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց պաշտպանության միջոցները՝ սահմանելով ազդարարման 3 եղանակ՝ ներքին, արտաքին և հասարակությանը: Նշյալ օրենքով սահմանվում է գործատուի հասկացությունը, նրա կողմից հնարավոր վնասակար գործողությունների ոչ սպառիչ ցանկը, ինչը հնարավոր է դարձնում գործատուի

կողմից ազդարարի համար բացասական հետևանքներ առաջացնող գործողությունների հետևանքների վերացման և ազդարարի վնասների հատուցման գործում դատարանի հայեցողության ճկունությունը: Բացի այդ, 10-ից ավելի աշխատող ունեցող գործատուները պարտավոր են ընդունել ազդարարման ներքին կանոնակարգ:

Սերբիայի «Ազդարարների պաշտպանության մասին» օրենքը երաշխավորում է ազդարարի անձնական տվյալների պաշտպանությունը, պետական կամ այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների հաղորդման ընթացակարգի առանձնահատկությունները, ազդարարի դատական պաշտպանության իրավունքը, ներքին ազդարարման հետ կապված գործատուների պարտականությունները և արդյունավետ ազդարարման գործում առանցքային մի շարք այլ հարցեր: Բացի այդ, գործատուները պարտավոր են գրավոր տեղեկացնել աշխատողներին նրանց ազդարարման իրավունքի մասին:

Կարևոր է նկատել, որ Սերբիայի օրենսդիրը նախատեսել է նաև Թրանսփարենսի ինթերնեշնլի ազդարարների պաշտպանության նմուշային սկզբունքներում տեղ գտած՝ ազդարարման վարույթի շրջանակներում ազդարարների մասնակցության սկզբունքը: Այս առումով, Թրանսփարենսի Ինթերնեշնլի նշյալ սկզբունքներում ամրագրված է. «(...) որպես տեղեկացված և հետաքրքրված շահագրգիռ անձինք՝ ազդարարները պետք է ունենան քննության հետագա ընթացքին և հարցաքննություններին աջակցելու իրական հնարավորություն: Ազդարարները պետք է ունենան իրենց բողոքի պարզաբանման և լրացուցիչ տեղեկությունների և ապացույցների տրամադրման հնարավորություն: Նրանք ունեն քննության ցանկացած արդյունքի մասին տեղեկացված լինելու և ցանկացած արդյունքին ծանոթանալու և այն մեկնաբանելու իրավունք»:

Բոսնիա-Հերցեգովինայի Հանրապետություն ազդարարների պաշտպանությանը նվիրված օրենքն ընդունել է 2013 թվականին: Նշյալ օրենքը նախատեսում է ազդարարման եղանակները, սահմանում պատասխանատվություն օրենսդրական դրույթների չապահովման համար և պաշտպանում այն աշխատողներին, որոնց հաղորդումը պարունակում է պետական գաղտնիք: Այստեղ նույնպես առկա են գործատուի վնասակար գործողությունների կանխման և հետևանքների վերացման կառուցակարգեր, սակայն հետաքրքրական է այս

հարցում լիազորությունների տրամադրումը ոչ թե դատարանին, այլ Բոսնիա-Հերցեգովինայի Հանրապետության Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման գործակալությանը, որն իրականացնում է ոլորտի նկատմամբ հսկողություն և կարգավորում: Ազդարարն իրավասու է դիմել նշյալ գործակալությանը ազդարարման հետ կապված կանխարգելիչ պաշտպանության խնդրանքով:

Վրաստանի Հանրապետությունը 2015 թվականին ընդունել է «Շահերի բխման և հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի մասին» օրենք (ուժի մեջ է մտնելու 2017 թվականին), որի չորրորդ բաժինը նվիրված է ազդարարների պաշտպանությանը:

Ինչպես վերը քննարկված պետությունների օրենսդիրները, Վրաստանի օրենսդիրը ևս նախատեսել է ազդարարի անձեռնմխելիության, ազդարարման հետ կապված պատասխանատվությունից ազատման, անձնական տվյալների պաշտպանության հնարավորությունները:

Սակայն հաշվի առնելով միջազգային առաջադեմ փորձը՝ օրենքի 20²-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ազդարարումը չի պաշտպանվում սույն օրենքով, եթե. (...) բ) ազդարարը գործում է իր սեփական շահի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ պարզևատրումը սահմանված է օրենքով»:

Փաստորեն, Վրաստանի Հանրապետությունը վերոբերյալ ամրագրմամբ նախատեսում է նաև ազդարարներին ֆինանսապես շահագրգռելու իրավական հնարավորություն:

Խոսելով նաև անանուն ազդարարման մասին՝ հարկ է նշել, որ անանուն ազդարարումը համարվում է ազդարարների պաշտպանության կարևոր երաշխիքներից մեկը, քանի որ վերջինս ապահովում է ազդարարների վստահությունը իրենց անձնական տվյալների պաշտպանության համար՝ հաշվի առնելով դրանց անհայտ լինելը ինչպես երրորդ անձանց համար, այնպես էլ պետական իրավասու մարմինների համար:

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի՝ ապահովելու համար, որ սույն Կոնվենցիայում հիշատակված հակակոռուպցիոն մարմինները հայտնի լինեն հանրությանը, և պետք է ապահովի

մուտքը դեպի այդ մարմինները, այդ թվում՝ անանուն ձևով՝ ամեն մի դեպքի մասին նրանց հաղորդումներ տրամադրելու համար, որը կարող են դիտարկվել որպես իրավախախտում՝ սույն Կոնվենցիային համապատասխան»:

Անանուն հաղորդումների եղանակով ազդարարումը ևս տարածված է միջազգային փորձում:

Այսպես, համաձայն Սլովակիայի Հանրապետության օրենսդրության՝ աշխատողները կարող են ներքին կարգով ազդարարել անանուն ձևով:

Սլովենիայի Հանրապետությունում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պարտավոր է բոլոր հաղորդումները քննել նույն կարգով՝ անկախ այն հանգամանքից, թե հաղորդողի ինքնությունը հայտնի է, թե ոչ: Այս նպատակով հաղորդումները կարող են ներկայացվել Հանձնաժողովին էլեկտրոնային փոստի, հեռախոսազանգի, կայքի, ֆաքսի եղանակով կամ անձնապես:

Ուկրաինայի Հանրապետության «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին անանուն հաղորդագրությունը ենթակա է քննարկման, եթե նրանում առկա տեղեկատվությունը վերաբերվում է կոնկրետ անձի, պարունակում է փաստացի տվյալներ, որոնք կարող են ստուգվել: Անանուն հաղորդագրությունը ենթակա է ստուգման այն ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում: Եթե նշված ժամկետում հնարավոր չէ ստուգել հաղորդագրության մեջ պարունակվող տեղեկատվությունը, համապատասխան մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը երկարացնում են հաղորդագրության քննարկման ժամկետը՝ այն ստանալու օրվանից 30-օրյա ժամկետով:

Կորեայի Հակակոռուպցիոն և քաղաքացիական իրավունքների հանձնաժողովը հատուկ ազդարարման համար ստեղծել է հեռախոսային թեժ գիծ:

Նույն կերպով, Էստոնիայում կոռուպցիոն դեպքերի մասին հաղորդում կարող է ներկայացվել թեժ գծի և կառավարության հակակոռուպցիոն կայքի միջոցով, ինչպես նաև առկա է հնարավորություն անանուն ձևով ներկայացնել հաղորդում ոստիկանությանը:

Հունգարիայում այսպիսի համակարգը դարձել է հասանելի Ազգային ոստիկանության վարչության կողմից գործարկված «Հեռախոսային վկա» անանուն ծառայության միջոցով: Հանցագործությունների կանխարգելման ազգային

խորհուրդը ունի նաև այս նպատակի համար նախատեսված էլեկտրոնային փոստ հասցե:

2013 թվականին Ավստրիայի արդարադատության նախարարությունը մեկնարկել է հատուկ հարթակ՝ անհատների կողմից իրավախախտումների մասին հաղորդումներ ստանալու նպատակով: Այս վիրտուալ համակարգի միջոցով օգտատերը պետք է ընտրի իրավախախտման տեսակը. դրանք են՝ կոռուպցիա, ծառայողական հանցագործություններ, սոցիալական հանցագործություններ, ֆինանսական հանցագործություններ, կեղծարար հաշվապահություն, կապիտալի շուկայի իրավախախտումներ, փողերի լվացում: Նշելով համապատասխան դաշտը՝ օգտատերը կարող է ներկայացնել իր տեղեկատվությունը, իսկ Հանրային դատախազի կոռուպցիայի դեմ և ծառայողական հանցագործությունների գործակալությունը իրավասու չէ հետապնդել հաղորդումները կամ փորձել բացահայտել անձի ինքնությունը: Իրավասու մարմինը կարող է համակարգի միջոցով պահպանել հետադարձ կապը: Անանության պաշտպանման համար՝ ազդարարը համակարգում ընտրում է կեղծանուն և գաղտնաբառ, իսկ ազդարարին անհատականացնող բոլոր տվյալները կոդավորվում են: Հետագայում համակարգը ապահովում է նաև ազդարարի տեղեկացվածությունը գործի հետագա ընթացքից:

Անդրադառնալով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց նյութաիրավական պաշտպանության երաշխիքներ տրամադրմանը՝ նշենք, որ նման երաշխիքներ նախատեսված են օտարերկրյա պետությունների օրենսդրություններում: Այսպես, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսվում է քրեական պատասխանատվություն դատավորի, երդվյալ ատենակալի կամ արդարադատության իրականացմանը մասնակցող այլ անձի, դատական կարգադրիչի, դատական կատարածուի, տուժողի, վկայի, քրեական դատավարության այլ մասնակիցների, ինչպես նաև հավասարապես նրանց մերձավորների նկատմամբ կիրառված անվտանգության միջոցների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման համար, եթե այդ արարքը կատարվել է այն անձի կողմից, ում այդ տեղեկությունները վստահվել կամ հայտնի էին դարձել իր ծառայողական գործունեության հետ կապված:

Բացի դրանից, Դաշնության քրեական օրենսգրքի 283-րդ հոդվածով նախատեսվում է քրեական պատասխանատվություն պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ տարածելու համար այն անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահվել էին կամ հայտնի էին դարձել իր ծառայության, աշխատանքի, ուսման հետ կապված կամ Դաշնության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, եթե այդ տեղեկությունները դարձել են այլ անձանց սեփականությունը Դաշնության քր. օր. 275-րդ և 276-րդ հոդվածներով նախատեսված այլ հանցագործությունների հատկանիշների բացակայության դեպքում:

Ղազախստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Կոռուպցիայի հակազդեցության գործում աջակցություն ցուցաբերած անձի վերաբերյալ տեղեկությունը համարվում է պետական գաղտնիք: Նշված տեղեկության հրապարակումը պատասխանատվություն է առաջ բերում, որը նախատեսված է օրենքով:

Կոռուպցիոն իրավախախտման մասին հաղորդած անձի գույքին կամ առողջությանը վնաս պատճառելու կամ այդպիսի գործողություններ կատարելու սպառնալիքի դեպքում, ելնելով կատարված հանցագործության հանգամանքներից, մեղավոր անձի գործողությունները որակվում են ընդհանուր հիմունքներով Ոսկրահնայի քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի /դիտավորությամբ ծանր մարմնական վնաս պատճառելը/, 122-րդ հոդվածի /դիտավորությամբ միջին ծանրության մարմնական վնաս պատճառելը/, 123-րդ հոդվածի /դիտավորությամբ ծանր մարմնական վնաս պատճառելը ուժեղ հոգեկան հուզմունքի վիճակում/, 129-րդ հոդվածի /սպանության սպառնալիք/, 194-րդ հոդվածի /գույքի դիտավորյալ ոչնչացում կամ վնասում/ համապատասխան մասերով:

Ելնելով հանցագործության բնույթից, դատարանն իրավունք ունի նաև պատիժը ծանրացնող հանգամանք ճանաչել տուժողի կողմից ծառայողական կամ հասարակական պարտքի կատարման կապակցությամբ հանցագործություն կատարելը /67-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ /պատիժը ծանրացնող հանգամանքներ/:

Մերկացնողի մասին տեղեկությունը կարող է հրապարակվել միայն նրա համաձայնության դեպքում, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության կոռուպցիոն իրավախախտման մասին տեղեկություն տրամադրած անձի տվյալների ապօրինի հրապարակման համար Ուկրաինայի քրեական օրենսգրքի 365 -րդ հոդվածով /իրավապահ մարմնի աշխատակցի կողմից իշխանության կամ ծառայողական լիազորությունների վերազանցություն/ կամ 367-րդ հոդվածով /պաշտոնական անփութություն/, ելնելով մեղավոր անձի դիտավորությունից, կատարված հանցագործության հետևանքներից և այլ հանգամանքներից:

Լեհաստանի քրեական օրենսգրքի 245-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով կիրառում է բռնություն կամ սպառնալիքներ վկայի, փորձագետ վկայի, թարգմանչի, մեղադրողի կամ մեղադրյալի վրա ազդեցություն գործելու համար կամ հետևաբար խախտում է տվյալ անձի անձնական անձեռնմխելիությունը, ենթակա է պատժի 3 ամսից մինչև 5 տարի ազատազրկման տեսքով:

Իրավապահ մարմինների աշխատակիցները կարգապահական պատասխանատվությունից բացի, իրենց լիազորությունները չարաշահելու կամ պարտականությունները պատշաճ կերպով չկատարելու համար նույնպես ենթակա են քրեական պատասխանատվության: Ներկա կանոնակարգումը ներառվել է Լեհաստանի քրեական օրենսգրքի 231-րդ հոդվածում: Ոստիկանության կողմից լիազորությունների չարաշահումը, որը գործնականում կարող էր հանգեցնել մի շարք այլ վարքագծերի առաջացմանը, պատկանում է չարաշահման գործողությունների կատեգորիային: Ինչպես նախատեսված է քրեական օրենսգրքի 231-րդ հոդվածով: Հանրային ծառայողը, ով չարաշահում է իր պարտականությունների կատարումը կամ չի կտարում իր պարտականությունները, գործում է ի վնաս հանրային և անհատական շահերի, ենթակա է մինչև 3 տարի ժամկետով ազատազրկման: Ի հավելումն, եթե հանցագործը կատարում է նման հանցագործություն նյութական կամ անձնական շահույթ ձեռք բերելու համար, նա ենթակա է ազատազրկման 1-ից 10 տարի ժամկետով: Մյուս կողմից, եթե հանցագործը գործել է առանց դիտավորության և պատճառել է էական վնաս, ենթակա տուգանքի, ազատության սահմանափակման կամ մինչև 2 տարի ժամկետով ազատազրկման:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչները քրեական հետապնդման տվյալների դիտավորյալ հրապարակման համար, եթե այդ գործողությունը

առաջացրել է կասկածյալին, մեղադրյալին, վկային կամ տուժողին կամ նրանց ներկայացուցիչներին բարոյական կամ նյութական վնաս, կամ նպաստել է մեղադրյալին պատասխանատվությունից խուսափելու հարցում, կրում են քրեական պատասխանատվություն Մոլդովայի քրեական օրենսգրքի 315 հոդվածի 2-րդ մասով:

Կոռուպցիոն հանցագործությունների մասին հայտնաձև անձի գույքին կամ առողջությանը վնաս կամ վնասի սպառնալիք հասցնելու համար քրեական պատասխանատվության վերաբերյալ հատուկ նորմերը Բելառուսի Հանրապետության քր. օր.-ում բացակայում են: Սակայն նման գործողությունները ունեն կյանքի և առողջության, ունեցվածքի, անձնական ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցակազմերի ընդհանուր հատկանիշներ:

Կոռուպցիոն հանցագործությունների մասին հայտնաձև անձի տվյալների ոչ իրավագոր գաղտնագերծման համար իրավապահ մարմինների ներկայացուցիչների պատասխանատվության վերաբերյալ Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքում սահմանված է քրեական պատասխանատվություն նախաքննության կամ հետաքննության կամ փակ դատական նիստի տվյալները հրապարակելու համար /քր. օր. 407-րդ հոդված/, ինչպես նաև դիտավորությամբ քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցների վերաբերյալ տեղեկությունները հրապարակելու համար /քր. օր. 408 -րդ հոդված/:

2010 թվականի հուլիսի 19-ի «Պետական գաղտնիքների մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ հետախուզական, հակահետախուզական եւ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնաբար համագործակցող կամ համագործակցած քաղաքացիների մասին, ինչպես նաև այդ մարմինների հաստիքային գաղտնի, այդ թվում կազմակերպված խմբերում ներմուծված, հատուկ առաջադրանքներ կատարող /կատարած/ այդ մարմինների աշխատակիցների մասին տեղեկությունները կարող են դասվել պետական գաղտնիքների շարքին:

Այդ դեպքում, նման տեղեկություններ հրապարակած անձը, կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել /քր. օր. 373-րդ և 374 -րդ հոդվածներ/:

Լատվիայի քրեական դատավարության 375-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական վարույթների ժամանակ քրեական գործի մեջ մտնող տեղեկատվությունը դասակարգվում է որպես հետաքննության գաղտնիք: Բայց և այնպես, քրեական պատասխանատվություն չի նախատեսվում տեղեկատվության բացահայտման համար: Եթե քրեական գործում տեղ գտած նյութերը դասակարգվում են որպես պետական գաղտնիք (հատուկ հետաքննչական գործողությունների կատարման մեթոդներ, հնարքներ և այլ միջոցներ, ինչպես նաև դրա արդյունքում ստացված տեղեկատվություն), ապա անձիք պատասխանատվություն կկրեն այն բացահայտելու համար՝ Լատվիայի քրեական օրենսգրքում (234-րդ մասում) տեղ գտած ընթացակարգերի համաձայն:

Հոնկոնգի «Կաշառակերության կանխարգելման» հրամանագրի 30 մասը կիրառելի է բոլորի նկատմամբ, այսինքն՝ և իրավապահ մարմինների ծառայողների և քաղծառայողների նկատմամբ: Բացի դրանից, Հոնկոնգի «Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովի» բոլոր ծառայողները պարտավոր են ստորագրել ամենամյա հայտարարագիր՝ համաձայն «Ծառայողների գաղտնիության» կանոնակարգի 521 4 մասի: Տեղեկության անօրինական հրապարակումը համարվում է հանցագործություն, որը նախատեսված է կանոնակարգով: «Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովի» ծառայողը որևէ պատճառով հանձնաժողովը լքելու դեմքում, պետք է ստորագրի տվյալ հայտարարագիրը, որը պարտավորեցնում է նրան՝ նրա հեռանալուց հետո:

ԱՄՆ-ում կոռուպցիոն բնույթի հանցագործության վերաբերյալ հաղորդում տալու համար հաղորդում տվող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի սեփականությանը կամ առողջությանը վնաս պատճառելու կամ այդպիսի սպառնալիքի համար առկա են քրեական ստատուտներ, որոնք կարգավորում են նման տեսակի հանցագործությունները, որոնցից է արդարադատությանը խոչընդոտելը և վկայի վրա ճնշում գործադրելը: Այս հատուկ քրեական ստատուտները կարող են կիրառվել ցանկացած հանցագործություն կարգավորող օրենքների հետ միաժամանակ, ինչպես օրինակ՝ սպանությունը, հրազենի գործադրմամբ հարձակում և այլն: ԱՄՆ-ում նման ստատուտները հասանելի են և դաշնային և նահանգային իրավական համակարգում:

Իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք, ովքեր հրապարակում են տեղեկատվությունն առանց թույլտվության, ենթակա են քրեական հետապնդման: Սա վերաբերում է բոլոր դեպքերին, ոչ միայն կաշառակերության դեպքերին: Իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք կարող են նաև ենթարկվել վարչական պատասխանատվության միջոցների՝ նախազգուշացում, առանց աշխատավարձ վճարելու աշխատանքից հեռացում, պաշտոնից հեռացում, դասային աստիճանից զրկում: Խստության աստիճանը կախված է տեղեկատվության դասակարգման աստիճանից: Արդարադատությանը խոչընդոտելուն ի հավելումն, որոշ այլ դաշնային ստատուտներ են կիրառվում դատական հետապնդում կատարելու համար տեղեկատվությունը տարածելու համար:

Վրաստանի «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» օրենքի 20⁴ հոդվածի 1-ին կետով չի թույլատրվում մերկացնողին կամ նրա հարազատին սպառնալը, ճնշումը, հարկադրումը, ստորացումը, հետապնդումը, նրա նկատմամբ ճնշում գործադրելը, նրան բարոյական կամ նյութական վնաս պատճառելը, բռնություն կամ բռնության սպառնալիք գործադրելը, խտրականական վերաբերմունքը կամ մերկացման փաստի հետ կապված այլ ապօրինի արարքի կատարումը:

Վրաստանի օրենսդրությունը անմիջականորեն չի սահմանում քրեական պատասխանատվություն իրավապահ մարմինների ներկայացուցչի կողմից տեղեկություն տրամադրած անձի տվյալների ապօրինի հանձնման դեպքում, սակայն գոյություն ունեն նորմեր, որոնք սահմանում են պատասխանատվություն անձնական տվյալների ապօրինի հրապարակման համար: Գոյություն ունի ինչպես քրեաիրավական, այնպես էլ վարչաիրավական պատասխանատվություն:

Անդրադառնալով նաև հանցագործության վերաբերյալ հաղորդում ներկայացնող անձանց տրվող պաշտպանությանը՝ մեջբերենք միջազգային փորձից որոշ կարգավորումներ^Լ Այսպես, համաձայն «Տուժողների, վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պետական պաշտպանության մասին» ՌԴ 20.08.2004թ. №119-ԴՕ Դաշնային Օրենքի 2-րդ հոդվածի՝ պետական պաշտպանության ենթակա են.

- տուժողը,
- վկան,

- մասնավոր մեղադրողը,
- կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, նրանց պաշտպանները և օրինական ներկայացուցիչները, դատապարտյալը, արդարացվածը, ինչպես նաև անձը, որի նկատմամբ քրեական գործը կամ քրեական հետապնդումը կարճվել է,
- փորձագետը, մասնագետը, թարգմանիչը, ընթերական, ինչպես նաև քրեական դատավարությունում մասնակցող մանկավարժն ու հոգեբանը,
- քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը,
- օրինական ներկայացուցիչները, տուժողների, քաղաքացիական հայցվորի և մասնավոր մեղադրողի ներկայացուցիչները:

Դիմողի, ականատեսի կամ հանցագործության զոհի, ինչպես նաև հանցագործության կանխմանը կամ բացահայտմանը նպաստող այլ անձանց նկատմամբ պետական պաշտպանության միջոցները կարող են կիրառվել նաև մինչև քրեական գործի հարուցումը:

Պետական պաշտպանությանն են ենթակա նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված մերձավոր ազգականները, ազգականները և մերձավոր անձինք, որոնց նկատմամբ ապօրինի ոտնձգությունը իրականացվում է վերը նշված անձանց վրա ազդելու նպատակով:

ՌԴ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի «ի» կետի համաձայն՝ պատասխանատվությունը եւ պատիժը մեղմացնող հանգամանքներ են հանդիսանում, այդ թվում նաև մեղայականով ներկայանալը, հանցագործությունը բացահայտելուն, հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն աջակցելը:

Ընդ որում, մեղադրող և պաշտպանող կողմերի միջև կարող է կնքվել համագործակցության մասին մինչդատական համաձայնագիր, որում նշված կողմերը համաձայնեցնում են կասկածյալի կամ դատապարտյալի պատասխանատվության պայմանները կախված քրեական գործը հարուցվելուց կամ մեղադրանք ներկայացվելուց հետո նրա գործողությունների հետ:

Համագործակցության մասին մինչդատական համաձայնագրի հետ կապված դատական որոշումն ընդունելու հատուկ կարգը նախատեսված է ՌԴ քրեական օրենսգրքի 62 հոդվածով:

Համաձայն «Կոռուպցիայի հակազդման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ կետի՝ կոռուպցիոն իրավախախտման մասին հաղորդած կամ կոռուպցիայի հակազդեցության գործում այլ կերպ համագործակցություն ցուցաբերած անձը գտնվում է պետության պաշտպանության ներքո և խրախուսվում է Ղազախստանի Հանրապետության կառավարության «Կոռուպցիոն իրավախախտման փաստի մասին հաղորդած կամ կոռուպցիայի հակազդման գործում համագործակցություն ցուցաբերած անձանց խրախուսելու կանոնները հաստատելու մասին» որոշմանը համապատասխան; Տվյալ կետի դրույթները չեն տարածվում այն անձանց վրա, որոնք կոռուպցիոն իրավախախտման փաստի մասին հաղորդել են ակնհայտ կեղծ տեղեկություն, որոնք ենթակա են պատասխանատվության՝ համաձայն ՂՀ ՎԻՎ օրենսգրքի 439-րդ հոդվածի (Կոռուպցիոն իրավախախտման փաստի վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություն):

Քրեական դատավարությունում մասնակցող վկաների, կասկածյալների և այլ անձանց, ինչպես նաև իրենց ընտանիքի անդամների և մերձավոր ազգականների անվտանգության ապահովման նպատակով, մարմինը, որը վարում է քրեական գործընթացը, անվտանգության միջոցներ է ձեռնարկում (ՂՀ քր. դատ. օր.–ի 97-րդ հոդ.՝ քրեական գործընթացում մասնակցություն ունեցող վկաների, տուժողների, կասկածյալների և այլ անձանց անվտանգության միջոցներ):

Ղազախստանի Հանրապետությունում կոռուպցիոն հանցագործություն կատարած անձանց նկատմամբ քրեական հետապնդումն իրականացվում է համաձայն քրեական և քրեական դատավարության օրենսգրքի՝ ընդհանուր հիմունքներով: Պատիժ նշանակելիս հաշվի են առնվում քրեական իրավախախտման հասարակական վտանգավորության բնույթը և աստիճանը, մեղավորի անձը, այդ թվում՝ նրա վարքագիծը մինչ իրավախախտում կատարելը և դրանից հետո, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի 8-րդ բաժնի /Մերկացնողների պաշտպանությունը/ 53-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ պետական պաշտպանություն ստանում են.

1/ կոռուպցիայի կանխման և հակազդման մեջ օգնություն ցուցաբերած անձը /մերկացնողներ/ - այն անձը, ով հիմնավորված համոզմունքի առկայության դեպքում, որ տեղեկությունը արժանահավատ է, հայտնում է այլ անձի կողմից Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին;

2/ անձինք, ովքեր օգնություն են ցուցաբերում կոռուպցիայի կանխման և հակազդման մեջ, գտնվում են պետության պաշտպանության ներքո:

Կոռուպցիայի կանխման և հակազդման մեջ օգնություն ցուցաբերած անձանց կամ նրանց հարազատների կյանքին, բնակավայրին, առողջությանը և գույքին սպառնալիքի առկայության դեպքում Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին կատարված հաղորդման կապակցությամբ, իրավապահ մարմինների կողմից նրանց նկատմամբ կարող է կիրառվել Ուկրաինայի «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով նախատեսված իրավական, կազմակերպատեխնիկական և հակաօրինական ոտնձգություններից պաշտպանելուն ուղղված այլ միջոցներ;

3/ անձը կամ նրա ընտանիքի անդամը չեն կարող ազատվել կամ հարկադրվել ազատման կամ ղեկավարի կամ գործատուի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության կամ ենթարկվել ներգործության այլ բացասական միջոցների /տեղափոխում, ատեստացիա, աշխատանքի պայմանների փոփոխում, բարձր պաշտոնի նշանակվելու մերժում, աշխատավարձի կրճատում և այլն/ կամ այլ անձի կողմից այդպիսի ներգործության միջոցների սպառնալիքի՝ Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին նրանց կողմից հաղորդման կապակցությամբ:

4/ ազգային գործակալությունը, ինչպես նաև այլ պետական մարմինները, Ղրիմի ինքնավար հանրապետության իշխանության մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց աշխատակիցների կողմից այլ անձի կողմից Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին հաղորդագրությունների համար ապահովում են պայմաններ, ինչպես նաև հատուկ հեռախոսային գծերի, պաշտոնական կայքերի, էլեկտրոնային կապերի միջոցներով;

5/ Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին հաղորդումը կարող է կատարվել համապատասխան մարմնի աշխատակցի կողմից առանց հեղինակին նշելու /անանուն/:

Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին անանուն հաղորդագրությունը ենթակա է քննարկման, եթե նրանում առկա տեղեկատվությունը վերաբերվում է կոնկրետ անձի, պարունակում է փաստացի տվյալներ, որոնք կարող են ստուգվել:

Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին անանուն հաղորդագրությունը ենթակա է ստուգման այն ստանալու օրվանից 15 օրից ոչ ավել ժամկետում: Եթե նշված ժամկետում հնարավոր չէ ստուգել հաղորդագրության մեջ պարունակվող տեղեկատվությունը, համապատասխան մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը երկարացնում են հաղորդագրության քննարկման ժամկետը՝ այն ստանալու օրվանից 30 օրյա ժամկետով:

Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխման մասին» օրենքի պահանջների խախտման մասին հաղորդագրության մեջ շարադրված տեղեկության հաստատման դեպքում համապատասխան մարմնի ղեկավարը միջոցներ է ձեռնարկում կանխելու հայտնաբերված խախտումը, վերացնելու նրա հետևանքները և մեղավոր անձանց ենթարկելու կարգապահական պատասխանատվության, իսկ քրեական կամ վարչական իրավախախտման հատկանիշների հայտնաբերման դեպքում՝ նաև տեղեկացնում է կոռուպցիայի հակազդման ոլորտում հատուկ լիազորված սուբյեկտների;

6/ Ազգային գործակալությունն իրականացնում է մերկացնողների պաշտպանության ոլորտում օրենքի կատարման մշտական մոնիթորինգ, անցկացնում է ամենամյա վերլուծություն և այդ ոլորտում պետական քաղաքականության վերանայում;

7/ Ղրիմի ինքնավար Հանրապետության պետական մարմինների, իշխանության մարմինների պաշտոնատար և ծառայողական անձինք, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք, հանրային իրավունքի, նրանց կառուցվածքային ստորաբաժանումների իրավաբանական անձինք Ղրիմի ինքնավար հանրապետության համապատասխան պետական մարմինների,

իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հանրային իրավունքի, նրանց կառուցվածքային ստորաբաժանումների իրավաբանական անձանց աշխատակիցների կողմից կոռուպցիոն կամ կոռուպցիայի հետ կապված իրավախախտում հայտնաբերելու կամ այդպիսի իրավախախտում կատարելու մասին տեղեկություն ստանալու դեպքում պարտավոր են իրենց լիազորությունների սահմաններում ձեռնարկել միջոցներ այդպիսի իրավախախտումը դադարեցնելուն և անհապաղ գրավոր ծանուցել նրա կատարման մասին կոռուպցիայի հակազդման ոլորտում հատուկ լիազորված սուբյեկտին:

Լեհաստանի Հանրապետության 2014թ. նոյեմբերի 28-ի «Տուժողների և վկաների պաշտպանության մասին» ակտը սահմանում է վկաների, տուժողների և նրանց մերձավորների պաշտպանության և աջակցության սկզբունքները և շրջանակները: Պաշտպանության և աջակցության միջոցները կարող են օգտագործվել նախքան քրեական կամ քրեական հարկային վարույթի հարուցումը, եթե կյանքին կամ առողջության սպառնալիքը դառնում է ակնհայտ օպերացիոն-նախնական քննության կամ վարույթների ընթացքում: Պաշտպանության և աջակցության համար միջոցառումները նախատեսվում են նահանգային (մայրաքաղաքային) ոստիկանության պետի կողմից, ում ենթադատության ներքո գտնվում է տուժողը, վկան կամ նրանց մերձավորները, ում նկատմամբ որ պետք է իրականացվեն պաշտպանություն և աջակցության միջոցառումներ, որոնք անվանվում են պաշտպանության տակ առնված անձինք: Պաշտպանության և աջակցության միջոցառումների իրականացման և տրամադրման նպատակով հանգամանքների բացահայտման համար ապացույցների հավաքագրման գործընթացն անընդունելի է: Պաշտպանության և աջակցության միջոցառումների իրականացմանը և տրամադրմանն առնչվող տեղեկատվությունն երաշխավորված և պաշտպանված է Լեհաստանի Հանրապետության 2010թ. օգոստոսի 5-ի «Գաղտնիացված տեղեկատվության պահպանման մասին» ակտով:

Օրենսդիրը ներառել է «Քրեական պատասխանատվության չնախատեսման դրույթ», որով նախատեսվում են իրավապահ մարմիններին աջակցելու հանգամանքները և պայմանները: Համաձայն կանոնակարգման՝ կոռուպցիոն հանցագործության առնչությամբ հնարավոր է աջակցել իրավապահ մարմիններին ապացույցը ձեռք բերելու համար՝ ներառյալ մյուսների հետ նույն շարքում հատուկ

իրավապահ լիազորությունների կիրառում, որը ներառում է նյութական շահույթների գաղտնի ստացման գործողությունները: Այս օպերացիոն-հետախուզական գործունեության կիրառումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ անձին խոստացվել է շահույթի տրամադրում, բայց այս անձը սկզբնապես չի ընդունել այս շահույթը (Լեհաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 229-րդ հոդվածի 6-րդ կետ):

Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածը երաշխավորում է կոռուպցիոն հանցագործությունների մասին հաղորդում ներկայացրած վկայի իրավական պաշտպանությունը, եթե առկա են իրական հիմքեր ենթադրելու, որ վկայի կամ նրա մերձավոր ազգականի կյանքը, մարմնական անձեռնմխելիությունը կամ ազատությունը վտանգված են նրա կողմից տրված ցուցմունքների հետ կապված:

Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի կարգով նախատեսված իրավական պաշտպանությունից հավասարաչափ օգտվում են նաև գաղտնի գործակալները, ինչպես նաև քննության այլ մասնակիցները, որոնք օրենքի համաձայն ստացել են վկաների և քրեական դատավարության այլ մասնակիցների պաշտպանության պաշտպանվող անձի կարգավիճակ:

Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում քրեական պատասխանատվությունից ազատելու հնարավորություն այն անձանց համար, որոնք կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կատարման համար համագործակցել են իրավապահ մարմինների հետ: Միաժամանակ, Մոլդովայի Հանրապետության օրենսդրությունը նախատեսում է պատժի կրճատում, եթե մեղադրյալը կամ ամբաստանյալը համաձայնել է ճանաչել իր մեղքը:

Բելառուսի Հանրապետության «Կոռուպցիայի դեմ պայքարի» օրենքի 35-րդ հոդվածի համապատասխան՝ կոռուպցիայի և կոռուպցիոն իրավախախտման համար պայման ստեղծող իրավախախտման մասին հայտնաձև կամ այլ կերպ կոռուպցիան ի հայտ բերելուն նպաստող ֆիզիկական անձը գտնվում է պետության պաշտպանության ներքո:

Կոռուպցիան ի հայտ բերելուն նպաստող ֆիզիկական անձին, նրա կնոջը /ամուսնուն/ մտերիմ բարեկամներին կամ խնամիներին, եթե առկա են բավարար

տվյալներ, որոնք վկայում են այն մասին, որ իրենց նկատմամբ իրական սպանության, գույքի ոչնչացման կամ վնասման, կամ այլ հակաիրավական գործողությունների իրականացման վտանգ կա, երաշխավորվում է Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության օրենքով, Բելառուսի Հանրապետության Նախարարների խորհրդի 2016թ. հունվարի 21-ի թիվ 44 որոշմամբ հաստատված «Պաշտպանվող անձանց նկատմամբ անվտանգության միջոցների կիրառման կարգի մասին» Դրույթով, նախատեսված անվտանգությունն ապահովող միջոցների կիրառումը:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների մասին հայտնած անձանց նկատմամբ, անվտանգության միջոցների կիրառման կարգն ու դեպքերը, ինչպես նաև դրանց տեսակները քրեական դատավարության բոլոր մասնակիցների համար միևնույն են:

Բացի այդ, Բելառուսի Հանրապետության Նախարարների խորհրդի «Կոռուպցիան ի հայտ բերելուն նպաստող ֆիզիկական անձին, պարզևատրում և այլ վճարներ վճարելու մասին» 2016թ. փետրվարի 5-ի թիվ 101 որոշմամբ, վճարվում են պարզևատրում և այլ վճարներ, որոնք չեն նշվում եկամուտների և ունեցվածքի մասին հայտարարության մեջ:

Հոնկոնգի «Կաշառակերության կանխարգելման» հրամանագրի 30 Ա բաժինը վերաբերում է տեղեկություն հայտնողների պաշտպանությանը: «Կաշառակերության կանխարգելման» հրամանագրի 30 բաժնով նախատեսված հանցագործություններով յուրաքանչյուր անձ, ով չունի օրենքով նախատեսված լիազորություն կամ պատճառաբանված փաստ քննության էությունը կամ առարկան, կամ քննության մանրամասները բարձրաձայնելու համար, եթե այդ քննությունը իրականացվում է Հոնկոնգի Կոռուպցիայի դեմ անկախ հանձնաժողովում:

ԱՄՆ օրենսդրության համաձայն՝ քանի դեռ գործը շարունակվում է, առկա են մի քանի պաշտպանական միջոցներ, որ ՀԴԲ-ն կարող է կիրառել պաշտպանելու համար այն անձի ինքնությունը, ով տրամադրում է տեղեկատվությունը: Փաստաթղթաշրջանառության մեջ ՀԴԲ-ն կպահանջի որպեսզի անձի ինքնությունը պաշտպանի: Պաշտպանության մեկ այլ եղանակ է հանդիսանում անձին «Կոնֆիդենցիալ մարդկային աղբյուր» դարձնելը, որը նաև հայտնի է «CHS» /հատուկ

տեսակի պաշտպանություն/ հապավումով: Երբ անձը դառնում է հատուկ պաշտպանության կարիք ունեցող, տվյալ անձը ՀԴԲ բոլոր ֆայլերում նշվում է թվի ներքո՝ անվան փոխարեն, անձի գործը սահմանափակվում է և զեկուցումը տարվում է ոչ հրապարակային տարբերակով, բացառելով որևէ նշում արդյոք այդ անձը կին է, թե տղամարդ: Յուրաքանչյուր հնարավոր քայլ ձեռնարկվում է քողարկելու համար անձի համագործակցությունը ՀԴԲ-ի հետ: Չնայած ՀԴԲ-ն փորձում է պաշտպանել անձի ինքնությունը, ամեն դեպքում, երբ գործը քննվում է և ուղարկվում է դատարան, միշտ առկա է հնարավորություն, որ անձը պետք է ցուցմունք տա: Անձը տեղեկացվում է վկայություն տալու հնարավորության մասին և որ նրանց ինքնությունը կարող է հայտնի դառնալ, երբ նրանք սկսում են տեղեկատվություն տրամադրել ՀԴԲ-ին: Երբ անձը հանդիսանում է հատուկ պաշտպանության կարիք ունեցող, լրացուցիչ պաշտպանության միջոցներ են ձեռնարկվում այդ ողջ պաշտպանության ընթացքում:

ՀԴԲ-ն կարող է աշխատել ԱՄՆ «Մարշալների Ծառայության» հետ վկաներին վկաների պաշտպանության ծրագրում ներառելու առավել լուրջ դեպքերում, երբ անձը վախենում է իր անվտանգության համար՝ այն տեղեկատվության պատճառով, որ նա տրամադրում է: Նման դեպքերում հնարավոր է վկայի վերաբնակեցում: «Ազդանշան տվողների (մատնիչների) պաշտպանության» ակտը (այսուհետ՝ WPA) տրամադրում է օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներ դաշնային աշխատակիցների համար, ովքեր ներառված են «ազդանշան տալու» ծրագրի մեջ, այն է՝ տեղեկատվության բացահայտումը դարձնելով ապօրինի կամ ոչ պատշաճ կառավարչական գործունեություն: WPA պաշտպանությունը կիրառվում է գրեթե բոլոր դաշնային գործադիր իշխանության ծառայողների նկատմամբ և ենթակա է կիրառման, երբ «անձնական գործողությունը» կատարվել է «քողարկված ծառայողի» կողմից «պաշտպանության ներքո բացահատման պատճառով»: Ընդհանուր առմամբ մատնիչների պաշտպանության հարց կարող է առաջանալ հետևյալ 4 իրավիճակներում.

1/ աշխատողը դիմում է գործակալության «Վաստակների Համակարգի Պաշտպանության Խորհրդին» ծառայողին խոչընդոտող գործողության դեմ, որը հայտնի է որպես դիմում «Գլուխ 77»-ին,

2/ «Հատուկ Խորհրդի Գործակալության» կողմից կատարված գործողություն,

3/ «Վաստակների Համակարգի Պաշտպանության Խորհրդի» առջև անհատապես պաշտպանվող իրավունքների գործողություն (հայտնի է որպես անհատի գործելու իրավունք),

4/ աշխատողի կողմից ներկայացված բողոքներ՝ բանակցելի բողոքների գործընթացի ներքո:

Վերոհիշյալ կանոնները հնարավոր է կիրառել նաև վկաների նկատմամբ, սակայն փորձագետների համար նման «հատուկ» պաշտպանություն առկա չէ, քանի դեռ նրանց չեն սպառնացել: Անձը, ով ներկայանում է կոռուպցիոն պնդումներով, դասակարգվում է որպես փաստացի «տուժող»: Առկա են Գլխավոր դատախազի ղեկավար դրույթներ և իրավական ստատուտներ, որոնք կարգավորում են տուժողի պաշտպանությունը և իրավունքները:

Կոռուպցիոն իրավախախտման մասին տեղեկության տրամադրած անձի իրավական երաշխիքները սահմանվում են Վրաստանի «Հանրային ծառայությունում շահերի անհամատեղելիության և կոռուպցիայի մասին» օրենքի՝ V¹ գլխով: Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 9 գլուխը սահմանում է քրեական դատավարության մասնակցի պաշտպանության հատուկ միջոցների կիրառման կարգը:

Առաջարկվող լուծումները

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթի մի շարք տարրեր արդեն իսկ վերապահված են ԲՊԱ էթիկայի հանձնաժողովին՝ սույն Նախագծում փորձ է արվել կատարելագործել ՀՀ-ում գործող կոռուպցիայի դեմ պայքարի մոդելը՝ ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի կարողությունների զարգացման և գործառույթների ու լիազորությունների ընդլայնման միջոցով: ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի՝ որպես կոռուպցիայի կանխարգելման մասնագիտացված մարմնի դերի բարձրացումը հնարավոր է իրականացնել ԲՊԱ էթիկայի հանձնաժողովի կառուցվածքային և գործառնական կարողությունների զարգացման միջոցով: Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ պետությունում գործող հակակոռուպցիոն կանխարգելիչ մարմնի վերաբերյալ պահանջ ամրագրված է մի շարք միջազգային իրավական ակտերով՝ մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ

հողվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի մարմնի կամ, անհրաժեշտության դեպքում մարմինների առկայությունը, որոնք իրականացնում են կոռուպցիայի կանխարգելում(...)»: Միաժամանակ պետությունում գործող հակակոռուպցիոն մարմինը կամ մարմինները պետք է մասնագիտացած լինեն կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում, նմանատիպ դրույթ է ամրագրված ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 36-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ(...)»:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի անդամ պետություն է: ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիան ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2006թ. հոկտեմբերի 23-ին: Հաշվի առնելով ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 6-րդ և 36-րդ հոդվածները Հայաստանի Հանրապետությունը նույնպես կարևորում է հակակոռուպցիոն կանխարգելիչ գործառույթներ իրականացնող մարմնի առկայությունը: ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի անկախ մասնագիտացած մարմին ստեղծելու անհրաժեշտությունն ամրագրվել է նաև Եվրոպական Միության հետ կնքված «Լրացում No 1 - Աջակցություն Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին՝ Փուլ II» համաձայնագրի շրջանակներում, որով Հայաստանի Հանրապետությանը առաջարկվել է ստեղծել մշտապես գործող և անկախ հակակոռուպցիոն մարմին, որը պետք է գործի ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» 6-րդ հոդվածի, ինչպես նաև «Հակակոռուպցիոն մարմինների վերաբերյալ սկզբունքների Զակարտայի հայտարարության» հիման վրա:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի զարգացման նպատակով ուսումնասիրվել են տարբեր պետություններում գործող կոռուպցիայի կանխարգելման մարմիններին բնորոշ հիմնական հատկանիշները և գործառույթների շրջանակը: Միջազգային փորձի վերլուծության արդյունքում պարզ

է դարձել, որ մի շարք պետություններում գործում են մասնագիտացած մարմիններ, որոնք իրականացնում են բարեվարքության և կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մարմինների գործառույթներ: Մասնավորապես՝ կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթներ իրականացնող մարմին գործում է Սլովենիայում¹ ի դեմս կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, որի անկախության ապահովման նոր երաշխիքներ ամրագրվեցին «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի ընդունմամբ: Սլովենիայում գործող կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ունի երկու բաժին՝ վերահսկողության բյուրո և հանրային կանխարգելման ու բարեվարքության կենտրոն: Վերահսկողության բյուրոն իրականացնում է հետևյալ գործառույթները՝ շահերի բախման և ապօրինի հարստացման մեղադրանքներով ուսումնասիրությունների իրականացում, հաղորդում տվող անձանց պաշտպանություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բարձրաստիճան պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրման հետ կապված գործառույթներ: Հանրային կանխարգելման ու բարեվարքության կենտրոնն ընդունում է ազգային հակակոռուպցիոն գործողությունների ծրագիրը, իրականացնում այդ գործողությունների համակարգում, հանրային մարմինների բարեվարքության ծրագրերի իրականացմանն օժանդակություն և այլն: Սլովենիայում գործող կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը «Բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքին համապատասխան իրականացնում է նաև վերլուծական, համակարգման, կանխարգելիչ և կրթական գործառույթներ: Մոլդովայում կոռուպցիայի դեմ պայքարի ազգային հակակոռուպցիոն կենտրոնին զուգահեռ գործում է նաև Ազգային բարեվարքության հանձնաժողովը (National Integrity Commision): Ազգային բարեվարքության հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է 2011թ. ընդունված օրենքի հիման վրա: Ազգային բարեվարքության հանձնաժողովը վերահսկողություն է իրականացնում պաշտոնատար անձանց, դատավորների, դատախազների, այլ պետական պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների նկատմամբ: Ազգային բարեվարքության հանձնաժողովի գործունեությունը միտված է հանրային ծառայողների բարեխղճության, բարեվարքության խթանմանը, որն իրականացվում է քաղաքացիական հասարակության, ազգային և միջազգային կառույցների ակտիվ

մասնակցությամբ: ՍՄՆ-ում գործում է կառավարության էթիկայի գրասենյակը, (The United States Office of Government Ethics), որը համագործակցում է գործադիր իշխանության մի շարք մարմինների հետ: Կառավարության էթիկայի գրասենյակը իրականացնում է հետևյալ գործառույթները՝ շահերի բախման իրավիճակների հայտնաբերումը, հանրային ոլորտում իրազեկվածության բարձրացումը և այլն: Կառավարության էթիկայի գրասենյակը իր գործառույթներն իրականացնելիս հաշվետու է Հանրապետության նախագահի և կոնգրեսի առջև: Կառավարության էթիկայի գրասենյակը քննչական գործառույթներ չի իրականացնում, սակայն իր գործառույթներն իրականացնելիս ակտիվորեն համագործակցում է տարբեր պետական մարմինների հետ: Թայլանդում գործում է Ազգային հակակոռուպցիոն հանձնաժողովը, որը ակտիվ դերակատարություն ունի կոռուպցիայի կանխարգելման և հանրային բարեվարքության ոլորտներում: Գործում են էթիկայի և բարեխղճության բյուրո, գույքի հայտարարագրերի խումբ, քաղաքական սեկտորում հայտարարագրերի ստուգման բյուրո, հանրային ոլորտում հայտարարագրերի ստուգման բյուրո: Էթովպիայում 2005թ. ստեղծվել և գործում է Բարեվարքության և հակակոռուպցիոն հանձնաժողովը, որը հաշվետու է վարչապետի առջև, սակայն իր գործառույթներն իրականացնելիս հանձնաժողովն անկախ է: Բարեվարքության և հակակոռուպցիոն հանձնաժողովը գործունեության նպատակներն են՝ համագործակցել այլ մարմինների հետ, որի արդյունքում հասարակության մեջ ձևավորել անհանդուրժողական վերաբերմունք կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում: Քենիայում նույնպես գործում է էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողովը, որը գործունեության հիմքը 2011թ. ընդունված «Էթիկայի և հակակոռուպցիոն ակտ»-ն է: Էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողովը իրականացնում է հանրային պաշտոնյաների բարեվարքության ապահովման և կոռուպցիայի կանխարգելման գործառույթներ: Էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողովը ձևավորվում է Հանրապետության նախագահի կողմից՝ հետևյալ մարմինների առաջարկությամբ՝ Հանրապետության նախագահ, վարչապետ, էթիկայի մասով պատասխանատու նախարարություն, մարդու իրավունքների պաշտպանության համար պատասխանատու հանձնաժողով, գենդերային հավասարության հանձնաժողով, հեռուստատեսության հանձնաժողով, կրոնական հարցերով հանձնաժողով: Էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողովը

իրականացնում է հետևյալ գործառույթները՝ միջոցներ է ձեռնարկում ոչ պատշաճ վարքագծի և կոռուպցիոն իրավախախտումների կանխարգելման համար, իրականացնում է ուսումնասիրություններ, որոնց հիման վրա հարուցում է վարույթներ: Էթիկայի և հակակոռուպցիոն հանձնաժողովը իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով հաղորդում է ներկայացնում Հանրապետության նախագահին և Ազգային ժողովին: Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթներ իրականացնող մարմին է գործում նաև Մակեդոնիայում՝ ի դեմս Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովի: Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովի գործունեության իրավական հիմքը «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքն է: Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովը անկախ մարմին է, որի անդամները նշանակվում են պառլամենտի կողմից: Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովը օժտված է ինստիտուցիոնալ անկախությամբ՝ պառլամենտից և կառավարությունից: Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովն իր գործառույթներն իրականացնելիս արդյունավետ կերպով համագործակցում է քննչական և դատախազական մարմինների հետ: Մասնավորապես, ցանկացած անձ կարող է կոռուպցիոն բնույթի արարքների վերաբերյալ հաղորդում ներկայացնել Հանձնաժողովին: Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովը հավաքում է փաստեր, կատարում ուսումնասիրություն և գործը փոխանցում քննչական մարմիններին, որոնք իրականացնում են նախաքննություն՝ տեղեկացնելով հանձնաժողովին: Մակեդոնիայում գործող Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովը մի շարք գործառույթներ է իրականացնում հակակոռուպցիոն ռազմավարությունների մշակման և իրականացման ոլորտներում, որի համար հանձնաժողովը կրում է պատասխանատվություն: Կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով հանձնաժողովն իր գործունեության վերաբերյալ ամենամյա հաշվետվություն է ներկայացնում պառլամենտին, Հանրապետության նախագահին և կառավարությանը: Կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ գործառույթներ իրականացնող մարմին է գործում նաև Սերբիայում՝ ի դեմս Հակակոռուպցիոն գործակալության, որը հիմնադրվել է 2009 թվականին: Հակակոռուպցիոն գործակալության գործունեության իրավական հիմքը «Հակակոռուպցիոն գործակալության մասին» օրենքն է, որի 4-րդ հոդվածի

համաձայն՝ գործակալությունը ինքնավար և անկախ պետական մարմին է, և հաշվետու է Ազգային ժողովի առջև իր գործառույթների իրականացման ընթացքում, գործակալությունն ունի իրավաբանական անձի կարգավիճակ: Հակակոռուպցիոն գործակալությունն ունի ինն անդամներից կազմված խորհուրդ, որի անդամներն ընտրվում են պառլամենտի կողմից: Հակակոռուպցիոն գործակալության տնօրենին նշանակում և ազատում է խորհուրդը: Հակակոռուպցիոն գործակալության գործառույթների շրջանակն ընդգրկում է կոռուպցիայի կանխարգելումը և կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մշակումը, ինչպես նաև հակակոռուպցիոն կրթական ծրագրերի մշակումը և ոլորտին առնչվող այլ գործառույթների իրականացումը: Սերբիայում Հակակոռուպցիոն գործակալությունից բացի գործում է նաև կոռուպցիայի դեմ պայքարի հանձնաժողով, որը գլխավորում է վարչապետը:

Մի շարք պետություններում (Սերբիա, Մակեդոնիա, Մոլդովա, Բոսնիա և Հերցեգովինա, Ուկրաինա և այլն) գործող կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում մասնագիտացած մարմինների գործառույթների համեմատական վերլուծությունից բխում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմիններն հիմնականում իրականացնում են հետևյալ գործառույթները՝ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում ռազմավարությունների և ոլորտային ծրագրերի մշակմանը մասնակցություն, պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման հետ կապված գործառույթներ, հայտարարագրերի վերլուծություն, բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ օրենքով սահմանված հիմքերով և կարգով վարչական վարույթների հարուցում, կոռուպցիոն բնույթի արարքների վերաբերյալ հաղորդում ներկայացրած անձանց պաշտպանության իրականացում, կոռուպցիայի դեմ պայքարի կրթական և վերապատրաստման ծրագրի մշակմանը մասնակցություն, կոռուպցիայի կանխարգելման ոլորտում հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:

Միաժամանակ, ազդարարների ինստիտուտի առումով հարկ է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի և Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիաները, պարտավորություն է

ստանձնել ապահովել կոռուպցիոն դեպքերով հաղորդում ներկայացրած անձանց արդյունավետ պաշտպանությունը: Բացի այդ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀՀԿ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի երրորդ փուլի շրջանակներում 2014 թվականի «Հակակոռուպցիոն բարեփոխումներ Հայաստանում» զեկույցի արդյունքում Հայաստանի Հանրապետությանը տրված 15-րդ հանձնարարականի երկրորդ մասում նշվում է ազդարարների պաշտպանությանն ուղղված օրենսդրական և պրակտիկ մեխանիզմների ընդունման անհրաժեշտությունը:

Այսպես, 1999 թվականին ընդունված և 2005 թվականի հունվարի 7-ին Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի մասին քաղաքացիական իրավունքի կոնվենցիայի 9-րդ հոդվածն ամրագրում է. «Յուրաքանչյուր Կողմ իր ներքին օրենսդրությամբ պետք է նախատեսի անարդարացի սանկցիաների կիրառումից պատշաճ պաշտպանություն այն աշխատողների համար, ովքեր կոռուպցիայի կասկածի հիմնավոր պատճառներ են ունեցել և իրենց կասկածների մասին բարեխղճորեն հայտնել են պատասխանատու անձանց կամ մարմիններին»:

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված և 2007 թվականի մարտի 8-ին Հայաստանի Հանրապետության կողմից Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 33-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի իր ներքին իրավական համակարգի մեջ բոլոր անձանց որևէ անարդարացի վերաբերմունքից պաշտպանության ապահովման համար պատշաճ միջոցներ ներառելու հնարավորությունը, ովքեր բարեխղճորեն և խելամիտ հիմքերով իրավասու մարմիններին հայտնում են այն իրավախախտումների հետ կապված փաստերի մասին, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան»:

ՏՀՀԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրով նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում ազդարարման այլընտրանքային մեխանիզմների ստեղծում և ազդարարների պաշտպանության գործիքակազմի սահմանում: Հիմք ընդունելով ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները և հաշվի առնելով առաջադեմ միջազգային փորձը, ինչպես

նաև ՀՀ կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգը և կոռուպցիայի կանխարգելման բաղադրատարրեր կազմող ինստիտուտները զարգացնելու նպատակով՝ ՀՀ-ում անհրաժեշտ է ընդունել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ), որն առավել ամբողջական և համակարգված կերպով կարգավորում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման հետ կապված հարաբերությունները: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ մի շարք միջազգային իրավական ակտերով այդ թվում՝ Եվրոպական գործընկերներն ընդդեմ կոռուպցիայի (EPAC) կազմակերպության սահմանած հակակոռուպցիոն մարմնի չափանիշների համաձայն՝ հակակոռուպցիոն մարմնի ստեղծումը, իրավասության և գործառույթների ամրագրումը պետք է իրականացվի օրենքի մակարդակով: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Նախագծով ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգում առկա խնդիրները լուծելու նպատակով առաջարկվել են հետևյալ լուծումները՝

1.1. Ձևավորել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» (այսուհետ՝ Հանձնաժողով): Նախագծով առաջարկվել է «*Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով*» անվանումը փոխարինել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով» անվանումով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ «*Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով*» անվանումը բավականին նեղ է և ԲՊԱ էթիկայի հանձնաժողովին հնարավորություն չի տալիս իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ մարմնին բնորոշ՝ կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ և կրթական գործառույթները: Այս առումով միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ տարբեր պետություններում գործող հակակոռուպցիոն մարմիններն ունեն տարբեր անվանումներ, մասնավորապես՝ Ֆրանսիայում՝ կոռուպցիայի կանխարգելման կենտրոնական ծառայություն, Մակեդոնիայում՝ կոռուպցիայի կանխարգելման պետական հանձնաժողով, Ալբանիայում՝ հակակոռուպցիոն մոնիթորինգային խումբ, ԱՄՆ-ում՝ կառավարական էթիկայի վարչություն, Բուլղարիայում՝ կոռուպցիայի դեմ պայքարում ուժերի համակարգման հանձնաժողով: Սակայն, հարկ է նշել, որ անկախ անվանումներից՝ վերը նշված մարմիններն իրականացնում են կոռուպցիայի դեմ պայքարի կրթական և

կանխարգելիչ, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ապահովման հետ կապված գործառույթներ:

Հաշվի առնելով բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ միջազգային փորձը՝ Նախագծով Հանձնաժողովի ձևավորման և գործունեության հիմքում դրվել են հետևյալ սկզբունքները՝

ա) կոլեգիալություն, որը ենթադրում է, որ Հանձնաժողովն գործում է որպես կոլեգիալ մարմին և իր գործունեությունն իրականացնում է կոլեգիալության սկզբունքով.

բ) ֆինանսական ինքնուրույնություն, որը ենթադրում է բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման ոլորտում օրենքով վերապահված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածություն.

գ) համագործակցություն, հանրային հաշվետվողականություն և թափանցիկություն, որը ենթադրում է, որ Հանձնաժողովը՝ բարեվարքության և կոռուպցիայի կանխարգելման ոլորտներում իր լիազորություններն իրականացնելիս համագործակցում է պետական իշխանության մարմինների հետ՝ միաժամանակ ապահովելով իր գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը.

դ) քաղաքական չեզոքություն, որը ենթադրում է, որ Հանձնաժողովն ապաքաղաքականացված մարմին է: Հանձնաժողովն իր գործունեության անկողմնակալությունը երաշխավորելու նպատակով քաղաքական հարցերում պահպանում է չեզոքություն:

1.2. Նախագծով նախատեսվել են Հանձնաժողովի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածության իրավական հիմքերը: Նախագծով առաջարկվում է Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար բավարար երաշխիքների նախատեսում, մասնավորապես՝

ա) ստեղծել մասնագիտացված աշխատակազմ, բ) ապահովել է հանձնաժողովի ֆինանսական և նյութատեխնիկական անկախությունը:

Նախագծով նախատեսվել է Հանձնաժողովի համար ստեղծել մասնագիտացված աշխատակազմ, որը կապահովի Հանձնաժողովին վերապահված գործառույթների իրականացումը: Նախատեսվել է, որ Հանձնաժողովի աշխատակազմում պետական ծառայությունն իրականացվելու է «Քաղաքացիական

ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Նախագծով հստակ երաշխիքներ են նախատեսվել Հանձնաժողովի ֆինանսական անկախության ապահովման համար: Նախատեսվել է, որ Հանձնաժողովը պետք է ունենա սեփական բյուջե և ֆինանսավորվելու է պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին: Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվելու է օրենքով սահմանված կարգով:

1.3. Հանձնաժողովին վերապահվել են կանխարգելման ոլորտում հետևյալ լիազորությունները և գործառույթները՝ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող քաղաքականության մշակմանը մասնակցություն, բարձրաստիճան պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև գործադիր իշխանության, Սահմանադրությամբ ստեղծված անկախ կամ ինքնավար մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի կանոնների, իրավիճակային շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևում, հայտարարագրման գործընթացը կանոնակարգում, հայտարարագրերը ստուգում ու վերլուծություն, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների կիրառման միասնականության ապահովում, հակակոռուպցիոն կրթական, հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացման լիազորություններ և այլն:

Այս առումով միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասնագիտացված մարմիններն ունեն ակտիվ դերակատարություն կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մշակմանը մասնակցության ոլորտում: Մասնավորապես՝ Բոսնիա և Հերցեգովինայում գործող կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման գործակալությունը մասնակցում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակմանը, ինչպես նաև պատասխանատու է հակակոռուպցիոն ռազմավարության նախապատրաստման համար: Լատվիայում գործող Կոռուպցիայի կանխարգելման բյուրոն նույնպես ակտիվ դերակատարություն ունի կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մշակման և իրավական ակտերի ռիսկայնության գնահատման ոլորտում, մասնավորապես՝ 2015 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման բյուրոն ակտիվորեն աշխատել է Լատվիայի օրենսդրության

բարեփոխման ուղղությամբ և շուրջ հիսուն իրավական ակտերում պարունակվող կոռուպցիոն կամ շահերի հնարավոր բախման դրույթների վերաբերյալ տվել առաջարկություններ և եզրակացություններ: Կոռուպցիայի կանխարգելման բյուրոյի հիմնական նպատակներից է նաև կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված կրթական ծրագրերի իրականացումը, հասարակության իրավագիտակցության բարձրացումը, հանրության շրջանում կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժականության ձևավորումը:

Հարավային Կորեայում գործող հակակոռուպցիոն հանձնաժողովը կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում քաղաքացիների մասնակցությունը խթանելու նպատակով կազմակերպում է հանրային իրազեկման միջոցառումներ, որոնք դրսևորվում են տարաբնույթ քննարկումների, սեմինարների կազմակերպման և այլ ձևերով:

Այս առումով բավականին առաջադիմական է նաև Լիտվայի փորձը, որտեղ 2002 թվականին հատուկ քննչական ծառայությունում ստեղծվել է կոռուպցիայի կանխարգելման բաժանմունք, որի հիմնական գործառույթն է կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու նպատակով վերլուծությունների իրականացումն ու եզրակացությունների տրամադրումը: 2014 թվականի ընթացքում կատարվել են շուրջ տասնհինգ ուսումնասիրություններ և տրվել համապատասխան եզրակացություններ: Հարավային Կորեայում, Սերբիայում և Մակեդոնիայում գործող հակակոռուպցիոն մարմինները նույնպես իրականացնում են կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն իրավական ակտերի մշակման, կրթական ծրագրերի մշակման և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

1.4. Նախագծով նախատեսվել են Հանձնաժողովի հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովման առավել արդյունավետ մեխանիզմներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հաջողության հասնելու հիմնական գրավականներից մեկը հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովումն է՝ Նախագծով անհրաժեշտ քայլեր են ձեռնարկվել Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովման համար: Մասնավորապես, Նախագծում սահմանվել է, որ Հանձնաժողովն ապահովում է իր գործունեության

հրապարակայնությունն ու թափանցիկությունը, որը իրականացվում է հետևյալ մեխանիզմների միջոցով՝ զանգվածային լրատվամիջոցների, Հանձնաժողովի կայքէջի միջոցով յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հաղորդումները տեղադրելով և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով:

Մի շարք պետություններում կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով նախատեսվել են որոշակի մեխանիզմներ, մասնավորապես՝ Ուկրաինայի կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն նույնպես ղեկավարվում է հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներով: Ուկրաինայի «Կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոյի մասին» օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն մինչև յուրաքանչյուր տարվա փետրվար ամիսը իր գործունեության վերաբերյալ զեկույց է ներկայացնում Հանրապետության նախագահին, խորհրդարանին և կառավարությանը: Հարավային Ուելսում գործող կոռուպցիայի դեմ պայքարի անկախ հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովման համար նույնպես նախատեսվել են հաշվետվողականության տարբեր մեխանիզմներ, որոնք դրսևորվում են հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հասարակությանը և պառլամենտին պարբերաբար հաշվետվություններ ներկայացնելով: Մոլդովայում գործող ազգային հակակոռուպցիոն կենտրոնը նույնպես իր գործունեության վերաբերյալ զեկույց է ներկայացնում, որով ներկայացվում են նախորդ տարվա ընթացքում հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքները:

1.5. Նախագծով ամրագրվել են Հանձնաժողովի անդամի անկախության ապահովման անհրաժեշտ երաշխիքներ: Այս առումով կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ Նախագծով հստակ ամրագրվել են Հանձնաժողովի անդամների լիազորությունների օրենքով սահմանված կարգով դադարման և դադարեցման հիմքերը, որն ուղղված է Հանձնաժողովի գործունեությանն օրենքով չնախատեսված անհարկի միջամտությունը կանխելուն: Նշված նորմի ամրագրումը անմիջականորեն բխում է «Հակակոռուպցիոն մարմինների վերաբերյալ սկզբունքների Զակարտայի հայտարարություն» դրույթներից, համաձայն որի՝ հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինների անդամները պետք է ունենան

երաշխիքներ՝ կապված լիազորությունների անհիմն դադարեցման հետ և վերջիններիս լիազորությունները կարող են դադարեցվել միայն օրենքով սահմանված կարգով, որը պետք է համարժեք լինի օրենքով հատկապես պաշտպանված, անկախություն վայելող մարմնի լիազորությունների դադարեցման համար նախատեսված ընթացակարգին:

Միաժամանակ, Նախագծով հստակ ամրագրվել են Հանձնաժողովի անդամների անկախության և անձեռնմխելիության երաշխիքներ: Մասնավորապես, նախատեսվել է, Հանձնաժողովի անդամը չի կարող պատասխանատվության ենթարկվել Հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող գործառույթների և լիազորությունների իրականացման կապակցությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա արարքում առկա են վարչական իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ: Հանձնաժողովի անդամը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր լիազորություններն իրականացնելիս հայտնաձև կարծիքի կամ կայացրած որոշման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նրա արարքում առկա են վարչական իրավախախտման կամ հանցագործության հատկանիշներ: Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Հանձնաժողովի անդամի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել կամ Հանձնաժողովի անդամը կարող է ազատությունից զրկվել ՀՀ գլխավոր դատախազի միջնորդության հիման վրա՝ միայն Հանձնաժողովի համաձայնությամբ: Հանձնաժողովի անդամն առանց Հանձնաժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Հանձնաժողովի անդամին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Հանձնաժողովի նախագահը: Հանձնաժողովի անդամը պարտավոր չէ բացատրություններ տալ Հանձնաժողովի վարույթում գտնվող կամ Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի կամ փաստաթղթերի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Միաժամանակ, Հանձնաժողովի անդամների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով Նախագծով նախատեսվել են Հանձնաժողովի անդամի կողմից պաշտոն զբաղեցնելու համար որոշակի

սահմանափակումներ, մասնավորապես՝ Հանձնաժողովի անդամը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Հանձնաժողովի անդամը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հանձնաժողովի անդամի վրա տարածվում են սույն օրենքով հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները:

1.6. Հանձնաժողովի արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով նախատեսվել են Հանձնաժողովի անդամներին ներկայացվող մի շարք պահանջներ, մասնավորապես՝ սահմանվել է, որ Հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել հանրային վստահություն վայելող, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր անձ, ով ունի բարձրագույն կրթություն և այդ կրթությամբ առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

Այս առումով միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ մի շարք պետություններ տարբեր մեխանիզմների միջոցով փորձել են ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիայի կանխարգելման ոլորտում մասնագիտացած մարմինների անձնակազմերի մասնագիտացումը: Մասնավորապես՝ Ավստրիայի հակակոռուպցիոն բյուրոյի ստեղծման և կազմակերպման մասին օրենքի¹ 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախատեսվել են հետևյալ չափանիշները՝ ունի հատուկ գիտելիքներ և ազգային և միջազգային ոլորտներում կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում փորձառություն: Միաժամանակ անձը կարող է նշանակվել, որպես տնօրեն կամ տնօրենի տեղակալ, եթե առնվազն հինգ տարի աշխատել է այնպիսի պաշտոնում, որը պահանջում է իրավաբանի կամ տնտեսագետի

¹<https://www.acauthorities.org/sites/aca/files/countrydoc/Federal%20law%20on%20the%20establishment%20and%20organization%20of%20the%20federal%20bureau%20of%20anticorruption.pdf>

աստիճան: Մալազիայի հակակոռուպցիոն հանձնաժողովի մասին օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը պետք է բավարար հետևյալ չափանիշները՝ քաղաքացիություն, հետբուհական կրթություն, ունի առնվազն տաս տարվա կառավարման ոլորտի փորձառություն, հետևյալ ոլորտներում՝ էթիկա և կառավարում, հանրային կառավարում, ղեկավար պաշտոն, տնտեսության ոլորտ, հասարակագիտության ոլորտ, աուդիտ, հաշվապահություն, հասարակական հարաբերություններ և հեռուստատեսություն: Հարավային Աֆրիկայի հակակոռուպցիոն ակտի 9-րդ հոդվածի համաձայն՝ անդամները պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝ քաղաքացիություն, հետևյալ ոլորտներում ունենա առնվազն 10 տարվա աշխատանքային փորձառություն՝ էթիկայի և արդյունավետ կառավարում, հանրային և մասնավոր ոլորտի կառավարում, քրեական հետապնդման ոլորտ, հաշվապահության, աուդիտ և ֆինանսական ոլորտ, հաշմանդամ չի, չի չբաղեցնում քաղաքական բնույթի պաշտոն: Կոսովոյի «Հակակոռուպցիոն գործակալության մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ մարմնի ղեկավար կարող ընտրվել այն թեկնածուն, ով բավարարում է հետևյալ պահանջները՝ քաղաքացիություն և մշտական բնակություն, բարձրագույն կրթություն, չի դատապարտվել հանցագործության համար, ունի բարոյական բարձի հատկանիշներ, ունի առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձառություն: Մոնղոլիայի հակակոռուպցիոն մարմնի մասին օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովի անդամ կարող է լինեն այն քաղաքացիները, ովքեր ունեն բարոյական բարձր հատկանիշներ, ունի բարձրագույն կրթություն, ունի մասնագիտական գիտելիքներ և հմտություններ:

1.7. Նախագծով առավել արդյունավետ մեխանիզմներ են նախատեսվել Հանձնաժողովի կողմից վարույթների հարուցման առումով: Առանձին գլուխ է հատկացվել Հանձնաժողովի կողմից իրականացվող վերլուծություններին և վարույթներին: Մասնավորապես, նախատեսվել է, որ Հանձնաժողովն իրականացնում է հայտարարգրերի ստուգում և վերլուծություն, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթներ, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, էթիկայի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման

վերաբերյալ վարույթներ: Միաժամանակ, յուրաքանչյուր դեպքում հստակ սահմանվել են վարույթների հարուցման հիմքերը, դիմումներ ներկայացնելու ժամկետները, դիմումներին ներկայացվող պահանջները, վարույթների հետ կապված այլ հարցերը, եզրակացություններ տալու և դրանց բողոքարկման ընթացակարգերը:

Նախատեսվել է նաև վերանայման վարույթը, մասնավորապես, սահմանվել է, որ Հանձնաժողովը անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների խախտումների վերաբերյալ համապատասխան մարմնի էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը վերանայում է այն հանրային ծառայողի դիմումի հիման վրա, որի վերաբերյալ ընդունվել է եզրակացություն՝ միաժամանակ նախատեսելով դիմումներին ներկայացվող պահանջները, վարույթների հետ կապված այլ հարցերը և եզրակացություններ տալու կարգը:

Այս առումով միջազգային փորձի վերլուծությունից բխում է, որ մի շարք պետություններում հակակոռուպցիոն մարմիններն արդյունավետ կերպով հսկողություն են իրականացնում հանրային ծառայողների վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ և անհրաժեշտության դեպքում հարուցում վարույթներ, մասնավորապես՝ Լատվիայում Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն «Կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոյի մասին» օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ իրավասու է հարուցել վարույթ, որի արդյունքում կարող է վարչական պատասխանատվության միջոցներ կիրառել, որոնք ենթակա են անմիջական կատարման: Սլովենիայում գործում է կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որը «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում հարուցում է վարչական վարույթներ և կարող է կիրառել պատասխանատվության միջոցներ:

1.8 Փաթեթով նոր իրավակարգավորումներ են նախատեսվել գույքի և եկամուտների հայտարարագրման ոլորտների հետ կապված: Նախագծով նախատեսվել են հետևյալ փոփոխությունները.

ա) Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի ընդլայնում: Նախագծով նախառաջ ներմուծվել է «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձինք» հասկացությունը, որը ներառում է հայտարարագիր ներկայացնելու

պարտականություն ունեցող անձանց առավել ընդգրկուն ցանկ: Նշված ցանկը մշակելու համար հիմք են հանդիսացել ինչպես առկա միջազգային փորձը, այնպես էլ նախապես մշակված մի շարք չափանիշներ:

Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի արևելյան գործընկերության շրջանակներում իրականացվող «Ծրագրային համագործակցության շրջանակ» ծրագրի ընթացքում մշակված «Շահերի բախման վերաբերյալ» մոդելային օրենքի (այսուհետ՝ նաև Մոդելային օրենք) համաձայն՝ հայտարարագիր պետք է ներկայացնեն բոլոր հանրային ծառայողները, բացառությամբ՝ ցածր վարձատրություն ունեցող հանրային ծառայողների: Վերջիններիս համար բացառություն նախատեսելը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք չունեն ո՛չ բավարար եկամուտ, ո՛չ էլ բավարար լիազորվածություն՝ հնարավոր կոռուպցիոն գործողություններ իրականացնելու համար: Միաժամանակ, վարձատրությունը դիտարկվում է որոշումների կայացման լիազորվածության ցուցիչ. սովորաբար, որքան ցածր է վարձատրությունը, այնքան ավելի քիչ են պաշտոնատար անձի՝ որոշումների կայացման լիազորությունները: Հետևելով նշված մոտեցմանը՝ Մոդելային օրենքով առաջարկվում է հայտարարագրման պարտականություն սահմանելիս հաշվի առնել նաև վարչատրության չափը և որոշումների կայացման լիազորությունը: Բացի այդ, հայտարարագրման պարտականությունը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն հանրային ծառայության պաշտոնի և վարձատրության վրա, այլև կոնկրետ աշխատանքի բնույթով պայմանավորված ռիսկի տեսակի, քանի որ միևնույն պաշտոն և վարձատրություն ունեցող հանրային ծառայողները կարող են կանգնել տարբեր ռիսկային իրավիճակների առջև: Ուստի, «Շահերի բախման վերաբերյալ» մոդելային օրենքով առաջարկվում է հայտարարագրման պարտականություն սահմանելիս առաջնորդվել հետևյալ չափանիշներով.

1. որոշումների կայացման լիազորությունների առկայությունը կամ դրանց վրա ազդեցությունը,

2. երրորդ անձանց (այդ թվում՝ կազմակերպությունների) հետ շփումները՝ կապված համապատասխան գերատեսչության կողմից ծառայությունների մատուցման, պայմանագրերի կնքման և այլ գործունեության հետ,

3. թույլտվությունների (լիցենզիաների) տրամադրումը, գործունեության նկատմամբ հսկողության և մոնիթորինգի իրականացումը,

4. խոշոր ֆինանսական միջոցների տնօրինումը, հարկերի, տուրքերի և այլ վճարների սահմանումն ու գանձումը,

5. սուբսիդիաների, պարգևատրումների կամ այլ միջոցների, կոնցեսիաների տրամադրումը,

6. երրորդ անձանց համար ոչ մատչելի տեղեկատվության օգտագործմամբ գործունեության իրականացումը և այլն:

Մոդելային օրենքով նախատեսված վերոնշյալ չափանիշները հաշվի են առնվել հայտարարագրման պարտականության նոր շրջանակ սահմանելիս: Հայտարարագիր ներկայացնող անձանց նման լայն շրջանակի անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև միջազգային փորձով: Այսպես, Լիտվայի² օրենսդրության համաձայն՝ գույքի և եկամուտների հայտարարագիրը նախատեսված է հանրային քաղաքական պաշտոնյաների, քաղաքական պաշտոնների թեկնածուների, քաղաքացիական ծառայողների, դատական կատարածուների, նոտարների, դատավորների, դատախազների, զինվորական ծառայողների, պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների, կառավարության անդամների, տեղական ինքնակառավարման մարմինների անդամների, Եվրոպական Խորհրդարանի անդամների և այդ բոլոր պաշտոնյաների ընտանիքի անդամների համար:

Ռումինայում հայտարարագիր ներկայացնող են հանդիսանում երկրի նախագահը, նրա խորհրդականները, խորհրդարանի անդամները, կառավարության անդամները, վարչապետի աշխատակազմի մեջ ներառված պետական խորհրդականները, դատավորները, դատախազները, նրանց օգնականները և օժանդակող անձնակազմը, Օրենսդիր խորհրդի նախագահը և բաժինների նախագահները, մարդու իրավունքների պաշտպանն ու իր տեղակալները, օրենքով ստեղծված խորհուրդների, ծառայությունների նախագահներն ու անդամները, հանրային կրթական և առողջապահական պետական միավորներում ղեկավար կամ առաջատար պաշտոններ զբաղեցնող անձինք, Ոստիկանապետի գրասենյակի

² Տե՛ս <http://policy.mofcom.gov.cn/GlobalLaw/english/flaw!fetch.action?id=1352DA9F-B62E-48BA-A868-45549402D2D4#1352DA9F-B62E-48BA-A868-45549402D2D4>

անձնակազմը, ինչպես նաև ազգային կամ տեղական շահերի հետ կապված պետական կազմակերպություններում, ազգային կազմակերպություններում, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում առաջատար պաշտոններ զբաղեցնող անձինք: Հայտարարագրեր են ներկայացնում նաև մարզպետները և նրանց տեղակալները, Ռումինիայի Ազգային Բանկի խորհրդի անդամները և տնօրենները, մասնավորեցման ընթացակարգում ներգրավված հանրային հաստատությունների անձնակազմը, Ռումինիայի նախագահի թեկնածուները, պատգամավորի թեկնածուները. Սենատորի թեկնածուները, Եվրոպական Պառլամենտի անդամները, լոկալ խորհրդականը, քաղաքապետները, մի շարք այլ հանրային պաշտոնյաներ:

Վրաստանում³ «Հանրային ծառայությունում շահերի բախման և կոռուպցիայի մասին» օրենքով գույքի հայտարարագրման պարտավորություն ունեցող պաշտոնատար անձինք են հանդիսանում Հանրապետության նախագահը, կառավարության անդամները, Աջարիայի և Աբխազիայի Ինքնավար Հանրապետությունների բարձրագույն ներկայացուցչական մարմինների անդամները և գործադիր իշխանությունների ղեկավարները ու նրանց տեղակալները, վարչապետը և նրա տեղակալը, նախարարները և նրանց տեղակալները, նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալը, նախարարությունների կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև նրանց հավասարազոր պաշտոն զբաղեցնող անձինք, նախարարությունների կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տեղակալները և նրանց հավասարազոր պաշտոն զբաղեցնող անձինք, պետական դեպարտամենտի նախագահը, պետական տեսչության ղեկավարը և նրա տեղակալները, նախագահի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարները և նրանց հավասարազոր պաշտոն զբաղեցնող այլ անձինք, նախագահի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը, նրա տեղակալները, վարչության պետները և նրանց հավասարազոր պաշտոն զբաղեցնող անձինք, Վրաստանի ներքին գործերի և պաշտպանության նախարարությունների գերատեսչությունների, բյուրոների, հիմնական բաժինների և ստորաբաժանումների ղեկավարները նրանց տեղակալները և հավասարազոր պաշտոններ զբաղեցնող անձինք, Պետական

³ Տե՛ս http://csb.gov.ge/uploads/Law_of_Georgia_on_Conflict_of_Interest_and_Corruption.pdf

եկամուտների ծառայության ղեկավարը և նրա տեղակալները, ինչպես նաև հարկային բաժնի ղեկավարը, նաև Ազգային բանկի նախագահը և խորհրդի անդամները, Նախագահի քննարկումների վարչության անդամները, արդարադատության բարձրագույն խորհրդի անդամները, Վրաստանի անկախ կարգավորող հանձնաժողովի անդամները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ղեկավարը, նրա տեղակալները և հանձնաժողովի անդամները, տարածքային կառավարման մարմնի ղեկավարը և նրա տեղակալները, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները և տեղակալները, քաղաքապետերի և նրանց տեղակալների, ինչպես նաև քաղաքապետարանների աշխատակազմի ղեկավարները և նրանց տեղակալները, դատավորները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, դատախազության վարչությունների պետերը և նրանց հավասարազոր պաշտոնյաները, ինչպես նաև տարածաշրջանային դատախազները, Վրաստանի սահմանադրության դրույթների հիման վրա նշանակված, ընտրված պաշտոնյաները:

Նշված օտարերկրյա պետությունների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայտարարագրման պարտականություն սահմանվում է հանրային ծառայողների բավականին լայն շրջանակի համար: Ուստի, վերոգրյալ չափանիշներից և միջազգային փորձից ելնելով՝ մշակվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը: Այս փուլում հայտարարագրման պարտականություն է նախատեսվել առավելապես հանրային ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձանց համար՝ հաշվի առնելով վերջիններիս որոշումներ կայացնելու լիազորությունը, բարձր վարձատրությունը և ազդեցությունը իրենց գործունեության ոլորտում: Այսինքն, հայտարարագրման պարտականություն է սահմանվել նաև այն հանրային ծառայողների համար, ովքեր չեն հանդիսանում բարձրաստիճան պաշտոնատար անձ, սակայն իրենց գործառույթների և լիազորությունների բնույթով պայմանավորված՝ գտնվում են ռիսկային գոտում, և հանրային ծառայության համակարգում թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նկատառումներով նպատակահարմար է վերջիններիս ներառել հայտարարագիր ներկայացնող անձանց ցանկում: Մասնավորապես՝ քաղաքացիական ծառայության

և դատական ծառայության բոլոր բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք ներառվել են վերոնշյալ ցանկում:

Այնուամենայնիվ, հատուկ ծառայություններում հայտարարագրման շեմը ավելի ցածր է դրվել՝ հաշվի առնելով այդ ոլորտներում առկա հնարավոր կոռուպցիոն ռիսկերը: Նման կարգավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ ծառայություններում որոշումներ կայացնելու հնարավորությամբ, լայն հայեցողությամբ և լիազորություններով օժտված են նաև ավելի կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձինք: Նման նկատառումներից ելնելով, հայտարարագրման պարտականություն նախատեսվել է նաև բոլոր քննիչների և դատախազների համար:

Վերոգրյալ միջազգային փորձի հիման վրա և պետական գնումների ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով հայտարարագրման պարտականություն է սահմանվել նաև գնումների բողոքարկման խորհրդի անդամների համար:

բ) Հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձի՝ հայտարարագրման պարտականություն ունեցող ընդանիքի անդամների ցանկի փոփոխություն:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերից բխում է, որ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով գույքի, եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեն միայն բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ընդ որում՝ վերջիններիս հայտարարագրում իրենց ակտիվների և եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն լրացնելու պարտականություն ունեն նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը: Մինչդեռ «Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը» շրջանակը հայտարարագրման տեսանկյունից խիստ հայեցողական է: Ավելին, բացակայում են համատեղ ապրելու հանգամանքը բնորոշող կոնկրետ չափանիշները, իսկ «չափահաս և չամուսնացած» հայտանիշը չի կարող հիմք հանդիսանալ հայտարարագիր պահանջելու համար: Ընտանիքի անդամ հանդիսացող անչափահասների գույքը, ստացված եկամուտները ներկայումս

հայտարարագրման ենթակա չեն: Հայտարարագրման ենթակա չեն նաև պաշտոնատար անձի՝ փաստացի, չգրանցված ամուսնության մեջ գտնվող անձի գույքն ու եկամուտները: Անձանց այդ շրջանակի կողմից հայտարարագիր չներկայացնելու հանգամանքը առաջացնում է կոռուպցիոն ռիսկեր և գույքի և եկամուտների թաքցնելու հնարավորություն, ինչպես նաև խաթարում է հայտարարագրերի արդյունավետ վերլուծության և վերահսկողության հնարավորությունը:

Ուստի վերոգրյալ խնդրի լուծման նպատակով Նախագծով նախ և առաջ նախատեսվել է ներդնել «ընտանիքի կազմ» հասկացությունը՝ դրա ներքո ներառելով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձի ամուսնուն, անչափահաս զավակին (այդ թվում՝ որդեգրված), խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց, ինչպես նաև հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող ցանկացած անձանց: Վերջիններս նախագծով դիտարկվել են որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք: Նախագծի իմաստով համատեղ բնակվող են դիտարկվել պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձինք: Որպես հայտարարագիր ներկայացնող դիտարկվել է պաշտոնատար անձը՝ միաժամանակ «ընտանիքի կազմ»-ի մեջ մտնող անձանց համար սահմանելով պաշտոնատար անձի կողմից ներկայացվող հայտարարագրում իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականություն՝ սահմանելով նշված անձանց պատասխանատվությունն իրենց առնչվող տվյալների իսկության համար, բացառությամբ անչափահաս անդամների, որոնց վերաբերյալ տվյալների արժանահավատության պատասխանատուն հայտարարատու պաշտոնատար անձն է: Նախագծով սահմանվել է նաև հայտարարատու պաշտոնատար անձի պարտականությունը՝ տրամադրելու իր փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվություն: Այդ անձանց շրջանակը ևս վերանայվել է:

Հայտարարագիր ներկայացնող անձանց նման լայն շրջանակի անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև միջազգային փորձով:

Այսպես՝ Լիտվայում հայտարարագիր ներկայացնող ընտանիքի անդամներ են հանդիսանում պաշտոնատար անձի ամուսինը և երեխաները, այդ թվում՝ որդեգրված երեխաները, որոնց 18 տարին չի լրացել և ովքեր ապրում են պաշտոնատար անձի հետ⁴: Ուկրաինայում տվյալ իմաստով ընտանիքի անդամների թվին են դասվում ամուսինը և չամուսնացած երեխաները, որոնք ապրում են մի հարկի տակ, այդ թվում՝ փաստացի ամուսինը⁵: Վրաստանի օրենսդրության համաձայն, պաշտոնատար անձը պարտավոր է պաշտոնի անցնելուց երկու ամսվա ընթացքում ներկայացնել իր և իր ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագիր: Ընտանիքի անդամներ են հանդիսանում վերջինիս ամուսինը, անչափահաս կամ որդեգրված երեխան, և նրա հետ մշտական բնակության իրավունքով բնակվող այլ անձինք⁶: Սլովենիայի օրենսդրության համաձայն, եթե պաշտոնատար անձի ներկայացրած հայտարարագրի վերաբերյալ կասկածներ են առաջանում, լիազոր մարմինն իրավունք ունի պահանջել նրա ընտանիքի անդամների հայտարարագրերը: Օրենքի համաձայն՝ ընտանիքի անդամ տվյալ դեպքում հանդիսանում է պաշտոնատար անձի ամուսինը, երեխաները, որդեգրված երեխաները, ծնողները, եղբայրը և քույրը, ինչպես նաև միևնույն վայրում նրա հետ բնակվող այլ անձինք, այդ թվում՝ փաստացի ամուսինը⁷: Նոր Զելանդիայում պաշտոնատար անձինք հայտարարագրում են իրենց, ամուսինների և կախյալ երեխաների գույքը և եկամուտները: Ղազախստանում, հայտարարագրման համակարգի բացերը լրացնելու համար, նախատեսվում է համընդհանուր հայտարարագրման պարտականություն սահմանել բոլոր քաղաքացիների համար:

գ) Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ հայտարարաբար պաշտոնատար անձանց ռեեստրի վարման գործառույթի նախատեսում: Հաշվի առնելով, որ հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրը հայտարարագրերի ռեեստրի անխզելի տարրն է, Նախագծով սահմանվում է Հանձնաժողովի՝ հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրի վարման

⁴Տե՛ս <http://policy.mofcom.gov.cn/GlobalLaw/english/flaw!fetch.action?id=1352DA9F-B62E-48BA-A868-45549402D2D4#1352DA9F-B62E-48BA-A868-45549402D2D4>

⁵ Տե՛ս <http://www.oecd.org/corruption/anti-bribery/47489446.pdf>

⁶ Տե՛ս http://csb.gov.ge/uploads/Law_of_Georgia_on_Conflict_of_Interest_and_Corruption.pdf

⁷Տե՛ս <http://documents.worldbank.org/curated/en/664561468340842190/pdf/774620PUB0EPI00LIC00PUB0DA TE0503013.pdf>

գործառույթը և ռեեստրի պատշաճ վարման նպատակով պետական մարմինների աշխատակազմերի ղեկավարների՝ իրենց մարմիններում հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակման կամ դադարեցման վերաբերյալ տեղեկատվությունը սահմանված ժամկետում վերջինիս ներկայացնելու պարտականությունը:

դ) Հայտարարագրերի ներկայացման ժամկետների փոփոխություն: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված՝ հայտարարագրերի ներկայացման ժամկետները բավականին կարճ են: Օրինակ՝ Լիտվայի համապատասխան օրենքով հայտարարագրերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը, իսկ պաշտոնի ստանձնման դեպքում՝ մեկ ամիսը, Վրաստանի օրենսդրության համաձայն, պաշտոնատար անձը պարտավոր է պաշտոնի անցնելուց երկու ամսվա ընթացքում ներկայացնել իր և իր ընտանիքի անդամների գույքի և եկամուտների հայտարարագիր, Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայտարարագիրը հանձնում են պաշտոնը ստանձնելուց հետո 30 օրվա ընթացքում, իսկ ամենամյա հայտարարագիրը՝ մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ը: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ զգալիորեն ընդլայնվում է հայտարարագիր ներկայացնող անձանց ցուցակը՝ Նախագիծով երկարացվում են հայտարարագրերի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետները:

ե) Հայտարարագրերի ձևի, դրանց փոփոխության և հրապարակման կանոնների սահմանում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով նախատեսված չէ հայտարարագրի ձևանմուշը, ինչպես նաև հայտարարագրում փոփոխություններ կատարելու կարգը՝ Նախագիծով հայտարարագրի ձևանմուշը և դրանում փոփոխություններ կատարելու կարգը սահմանելու իրավասությունը վերապահվել է Հանձնաժողովին:

զ) Հանձնաժողովի՝ հայտարարագրերի վերլուծության գործընթացում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների տվյալների տեղեկատվական բազաներին հասանելիությունը:

Հայտարարագրերի վերլուծության գործառույթն արդյունավետ կերպով իրականացնելու և հայտարարագրված տվյալների իսկությունը ստուգելու, դրանց

արժանահավատության մեջ հավաստիանալու նպատակով Հանձնաժողովն ունի Նախագծի 23-րդ հոդվածի 8-րդ մասում թվարկված մարմինների տվյալների տեղեկատվական բազաներին հասանելիություն: Հանձնաժողովին որևէ գործառույթ վերապահելը՝ առանց դրա իրացման համար անհրաժեշտ կառուցակարգերի հստակեցման ձևական է դարձնում հիշյալ գործառույթը, ուստի հայտարարագրերի վերլուծության, դրանց արժանահավատության ստուգման գործառույթների իրականացման նպատակով Նախագծում սահմանվել է, որ Հայտարարագրերի վերլուծության գործընթացում հանձնաժողովն իրավասու է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, Կենտրոնական դեպոզիտարիայից և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց, ԱՔՌԱ վարկային բյուրոից, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կոմունալ ոլորտներում հանրությանը ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններից պահանջել (այդ թվում՝ էլեկտրոնային հարցման եղանակով) հայտարարատու պաշտոնատար անձի և նրա ընտանիքի կազմի մեջ գտնվող անձանց առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր և ստանալ դրանք, բացառությամբ՝ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

1.9. Նախագծով նախատեսվել է վարչական և քրեական պատասխանատվություն հայտարարագրման հետ կապված խախտումների համար: Հաշվի առնելով խնդրո առարկայի վերաբերյալ միջազգային առաջադեմ փորձը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությանը բնորոշ և Հայաստանի Հանրապետության՝ հակակոռուպցիոն բնագավառում որդեգրած քաղաքականության առանձնահատկությունները՝ առաջարկվում է գույքի և եկամուտների հայտարարագրման ոլորտում սահմանել վարչական և քրեական պատասխանատվություն՝ տարանջատելով երկու խումբ իրավախախտումներ՝

1) իրավախախտումներ, որոնք վերաբերում են այդպիսի հայտարարագրերի լրացմանը և ներկայացմանը,

2) իրավախախտումներ, որոնք վերաբերում են այդպիսի հայտարարագրերի բովանդակությանը:

2. Միաժամանակ, հիմք ընդունելով միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրությունները, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն բնագավառում որդեգրած քաղաքականության առանձնահատկությունները՝ մշակվել են «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերը, որոնք համալիր կարգավորման կենթարկեն ազդարարման հետ կապված իրավահարաբերությունները և կերաշխավորեն կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն գործիք հանդիսացող ազդարարման իրավունքի արդյունավետ իրացումը: Մասնավորապես, առաջարկվող օրենքով կարգավորվում են ազդարարման, ազդարարման կարգի, ազդարարի իրավունքների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների՝ ազդարարման հետ կապված պարտականությունների, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

Վերոնշյալ օրենքների նախագծերի լիարժեք իրացումն ապահովելու նպատակով հիմնական փաթեթին կից մշակվել են նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Օպերատիվ - հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում առանձին հոդվածներով քրեական պատասխանատվություն նախատեսել կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդում տալու համար հաղորդում տվող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին վնաս պատճառելու սպառնալիքի, կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ էթիկայի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ հանրային շահերին ուղղված այլ վնասի կամ դրանց սպառնալիքի վերաբերյալ հաղորդում տվող անձի անձնական տվյալների՝ իրավասու մարմնի ներկայացուցչի կողմից ոչ իրավաչափ գաղտնագերծման համար, ինչպես նաև հայտարարագիրը դիտավորությամբ չլրացնելու կամ չներկայացնելու կամ հայտարարագրում կեղծ տվյալ լրացնելու կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելու համար:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել իրավական երաշխիքներ հանցագործության մասին հաղորդում տվող անձանց համար: Մասնավորապես՝ վերջիններիս կտրվի տուժողների, վկաների և փորձագետների համար քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված հատուկ պաշտպանության միջոցներից հավասարապես օգտվելու հնարավորություն:

«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ կերաշխավորվեն քրեադատավարական օրենսդրությամբ հանցագործության մասին

հաղորդում տվող անձանց համար նախատեսված պաշտպանության միջոցների իրականացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգի շրջանակներում իրավասու անձի (իրավասու մարմնի) վրա դրված պարտականությունների չկատարման դեպքում նախատեսել վարչական պատասխանատվության միջոցներ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրացվել են Սահմանադրության փոփոխությունների համատեքստում ինքնավար մարմինների վերաբերյալ դրույթները:

Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում կսահմանվի կոռուպցիայի կանխարգելման ինստիտուցիոնալ համակարգը՝ կստեղծվի Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի կանխարգելման ոլորտում իրականացվող աշխատանքների խթանմանը, կոռուպցիայի մակարդակի նվազեցմանը, հանրային ծառայողների բարեվարքության, կարգապահության և բարեխղճության ամրապնդմանը, ինչն էլ, իր հերթին, կնպաստի հանրային կառավարման արդյունավետ, թափանցիկ և հաշվետու համակարգի ձևավորմանը:

Ազդարարների պաշտպանությանն ուղղված գործուն մեխանիզմների ներդրումն էլ, իր հերթին, կնպաստի հանրության մեջ կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարում ազդարարների ներգրավման եղանակով: Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի ստեղծումը հնարավորություն կընձեռի ազդարարներին ներկայացնել անանուն հաղորդումներ՝ պահպանելով իրենց անձնական տվյալների գաղտնիությունը: Բացի այդ, քննարկվող ինստիտուտի ներդրմամբ կբարձրանա կոռուպցիոն դեպքեր բացահայտող մարմինների գործունեության արդյունավետությունը: